Հաստատված է

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի
2010 թվականի ապրիլի 23-ի թիվ 52-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2009 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2010թ.

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 2009 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել **Օրենքով ամրագրված** գործառույթների իրականացմանը, «Հանձնաժողովի 2009 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը: Հանձնաժողովը 2009 թվականին շարունակել է աշխատանքներն՝ ուղղված ապրանքային շուկաներում Օրենքի հնարավոր խախտումների կանխմանը և արգելմանը, սպառողների շահերի պաշտպանությանը և ձեռնարկատիրության զարգացմանը նպաստելուն, Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովմանը, միջազգային կառույցների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությանը և Օրենքի ու Հանձնաժողովի կողմից ընդունվող ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) կատարելագործմանն ու պարզաբանումների ներկայացմանը:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Աշխատանքները տարվել են տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող, կանխող կամ արգելող գործողությունների կամ վարքագծի ուսումնասիրության, մրցակցային միջավայրի կարգավորման, ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ: Մասնավորապես, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը, գերիշխող դիրքի առկայությունը գնահատվել է ապրանքային շուկաների ուսումնասիրությամբ և նախորդ տարիներին ուսումնասիրված շուկաներում դիտանցումների հիման վրա: Հանձնաժողովը 2009 թվականի ընթացքում իր գործունեությունն ուղղել է ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր ապահովելու և կանխելու տնտեսվարող սուբյեկտների այն գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում էին կամ կարող էին հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Այսպես, Հանձնաժողովը 2009 թվականին ուսումնասիրել է 42 ապրանքային շուկա, դիտանցում է իրականացրել 104 ապրանքային շուկաներում, որոնցում գործում են Հայաստանի Հանրապետության ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում գրանցված 80 տնտեսվարող սուբյեկտներ:

2009 թվականին ուսումնասիրված շուկաների առաջին խումբը՝ դեղորայքի 23 ապրանքային շուկաներն են: Դեղորայքի ապրանքային շուկաներից 5-ը՝ ցածր կենտրոնացված են, 13-ը՝ միջին և 5-ը՝ բարձր: Վեց ապրանքային շուկաներում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ, ընդ որում՝ մեկ շուկայում գործում է երկու գերիշխող դիրք ունեցող

տնտեսվարող սուբյեկտ: Շուկայի մասնակիցների թիվը տատանվում է 6-ից մինչև 34: Երկրորդ խումբը ուսումնասիրված 13 ապրանքային շուկաներ են, որոնցից 9 շուկաներ բարձր կենտրոնացված են, իսկ 4-ը՝ միջին կենտրոնացված: Շուկայի մասնակիցների թիվը տատանվում է 3-ից մինչև 169: Ապրանքային շուկաների երրորդ խումբը ծառայությունների 6 ապրանքային շուկաներն են, որոնցից յուրաքանչյուրում գործում է մեկ տնտեվարող սուբյեկտ (բացառությամբ մեկի):

Հանձնաժողովը, ապրանքային շուկաներում ապրանքի գնի արհեստական (չհիմնավորված) բարձրացման պատճառները պարզելու նպատակով, հատուկ ուշադրություն է դարձրել այն շուկաներին (դեղերի, նավթամթերքի շուկաները), որտեղ առկա են գերիշխող դիրք զբաղեցնող սուբյեկտներ. արդյունքում նկատվեց գնային իրավիճակի կայունացում:

Ապրանքային շուկայի գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների կազմը 2009 թվականին 2008 թվականի նկատմամբ փոփոխվել է այսպես. 7 տնտեսվարող սուբյեկտներ հանվել են գրանցամատյանում գրանցումից, 5 տնտեսվարող սուբյեկտներ գրանցվել են գրանցամատյանում, մեկ տնտեսվարող սուբյեկտ վերակազմակերպվել է, իսկ դեղորայքի իրացման ոլորտի ապրանքային շուկաներում նոր ապրանքատեսակային սահմաններ ճանաչելու պատճառով 3 տնտեսվարող սուբյեկտներ հանվել են գրանցամատյանում գրանցումից և 7 տնտեսվարող սուբյեկտներ՝ գրանցվել:

Տնտեսվարող սուբյեկտների միջև համակենտրոնացման նկատմամբ վերահսկողության գործառույթը հանդիսանում է մրցակցային քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը: Համակենտրոնացման նկատմամբ պետական վերահսկողությունը նախատեսված է տնտեսության մենաշնորհացումը կանխելու, ինչպես նաև մրցակցային միջավայրի վատթարացում թույլ չտալու և գերիշխող դիրքի չարաշահման իրավիճակի առաջացման հնարավորությունը բացառելու համար: Տնտեսությունում ճգնաժամային իրավիճակի հետևանքով վերջերս արձանագրվել է համակենտրոնացման հայտարարագրման դիմումների թվի աճ, որի պատճառը ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտության գիտակցումն է: 2009 թվականին Հանձնաժողովը հարուցել է համակենտրոնացմանն առնչվող 5 վարչական վարույթ:

Հանձնաժողովը 2009 թվականի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների առնչությամբ և հանձնարարել տնտեսվարող սուբյեկտներին՝ դադարեցնել անբարեխիղճ մրցակցության արձանագրված դեպքերը:

Հանձնաժողովը 2009 թվականին գումարել է 26 նիստ և ընդունել 97 որոշում, այդ թվում՝ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվությունը չներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող 7 որոշում, ոչ հավաստի տեղեկատվություն ներկայացնելու համար պատասխանատվություն սահմանող 1 որոշում, անբարեխիղճ մրցակցության համար

պատասխանատվություն սահմանող 8 որոշում, հակամրցակցային համաձայնության համար պատասխանատվություն սահմանող 1 որոշում:

Հանձնաժողովի կողմից ընդունված տուգանք սահմանող որոշումների հիման վրա պետական բյուջե է գանձվել 6 318 600 դրամ: ՀՀ դատարաններ ներկայացված 7 հայցադիմումից 3-ը գտնվում են ՀՀ դատարանների վարույթներում, 3-ը կարճվել է, 1-ը՝ բավարավել: Հանձնաժողովի 2009 թվականի որոշումների դեմ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել 9 հայցադիմում:

Հանձնաժողովը որոշակի պարբերականությամբ շարունակել է դիտանցումներ իրականացնել առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքային շուկաներում՝ ձևավորվող գնային միտումների մասին օպերատիվ տեղեկատվություն ստանալու նպատակով: Դիտանցումներն իրականացվել են բենզինի, դիզելային վառելիքի, հացի, ալյուրի, մակարոնեղենի, բրնձի, արևածաղկի ձեթի, կարագի, շաքարավազի, կաթնամթերքի, մսի, հավի ձվի և սուրճի շուկաներում: Դիտանցումներն իրականացվել են Երևան քաղաքում ընդհանուր հարկման ռեժիմում գործող մանրածախ առևտրի առավել խոշոր օբյեկտներում, որոնց բաժին է ընկնում Երևան քաղաքի մանրածախ առևտրի նշանակալի բաժինը և հետևաբար, այստեղ առաջացող գնային միտումները տալիս են ընդհանրական պատկեր՝ շուկայում տիրող իրավիճակի մասին: Քանի որ շուկայում նշված ապրանքների առկայությունը մեծամասամբ ապահովվում է ներմուծման հաշվին, ուստի, տեղական գների ձևավորման համար էական նշանակություն է ունենում միջազգային շուկաներում համապատասխան ապրանքների գների ձևավորումը: Այդ պատճառով էլ գների դիտանցման արդյունքների հետ միևնույն ժամանակահատվածի համար համեմատվել են միջազգային շուկաներում առկա գնային միտումները, ինչպես նաև այն հիմնական պատճառները, որոնք առաջացրել են տեղական շուկայում գների աճ կամ նվազում: Ամփոփ տեղեկատվությունը տեղադրվել է նաև Հանձնաժողովի ինտերնետային կայքի (www.competition.am) «Վիճակագրություն» բաժնում:

2009 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացվել են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի լրացումների և փոփոխությունների նախագծի մշակման աշխատանքներ: Լրամշակումը միտված է կատարելագործելու մրցակցային օրենսդրությունը, բարձրացնելու Հանձնաժողովի գործունեության, այդ թվում նաև՝ մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումների կանխման արդյունավետությունը: Հանձնաժողովի կողմից փոփոխություն է կատարվել մեկ ենթաօրենսդրական ակտում, տրվել են պարզաբանումներ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության կիրառման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Մրցակցային օրենսդրության խախտումների հիմնական պատճառներից մեկն է հանդիսանում համապատասխան օրենքներին անտեղյակ լինելը, հասարակության մեջ մրցակցային մշակույթի ցածր մակարդակը: Այս կապակցությամբ Հանձնաժողովն ակտիվացրել է մրցակցային օրենսդրության քարոզչության աշխատանքները, այն է՝ տեղեկատվական

պայմանների ստեղծումը, որոնց ժամանակ շուկայական գործընթացի բոլոր մասնակիցներին, պետական մարմիններին, քաղաքացիներին հասկանալի կլինի բարեխիղճ մրցակցության պահանջների պահպանման անհրաժեշտությունը, օրենսդրության դրույթների պահպանման պարտադիր լինելը:

2009 թվականի ընթացքում Հանձնաժողովից առաքվել է թվով 2171 գրություն, մուտք է եղել 5252 գրություն, որից 72-ը՝ դիմում-բողոքներ: Հսկողություն է սահմանվել շուրջ 790 գրությունների կատարման նկատմամբ:

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հանձնաժողովում հաստիքացուցակով հաստատված աշխատողների ընդհանուր թվաքանակը կազմում է 76, որից 7-ը՝ Հանձնաժողովի անդամներն են, 45-ը՝ քաղաքացիական ծառայողներ են: Օրենքով սահմանված կարգով 2009 թվականին ատեստավորվել է քաղաքացիական ծառայության 1 բարձրագույն, 7 գլխավոր և 2 առաջատար պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայող: Հանձնաժողովի կողմից հայտարարվել է ՀՀ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու համար 4 մրցույթ, որին մասնակցել են 45 քաղաքացի: 3 քաղաքացիական ծառայող արտամրցութային կարգով նշանակվել են ավելի բարձր պաշտոններում: Մեկ քաղաքացիական ծառայող նշանակվել է Հանձնաժողովի անդամի պաշտոնում: Օրենքով սահմանված կարգով 11 քաղաքացիական ծառայող ենթարկվել է պարտադիր վերապատրաստման:

2009 թվականին Հանձնաժողովը շարունակել է զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանել մրցակցության պաշտպանության բնագավառում տեղի ունեցող իրադարձությունները և այդ ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կնքել է համագործակցության հուշագրեր և համագործակցության համաձայնագիր: Հանձնաժողովը 2009 թվականին հաստատել և ընդլայնել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և արտերկրի համանման կառույցների հետ:

ՀՀ Ազգային Ժողով է ներկայացվել և հրապարակվել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2010 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Հանճնաժողովը 2009 թվականի ընթացքում, ի թիվս այլ աշխատանքների, իրականացրել է մի շարք ապրանքային շուկաների կառուցվածքի ուսումնասիրություն՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ուսումնասիրության ժամանակ առաջացած խնդիրները, գերիշխող դիրքի վերանայման վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների դիմումները, գերիշխող դիրք ունեցող ընկերությունների լուծարվելու փաստը:

2009 թվականի ընթացքում Հանճնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք պարենային ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները
(2008 թվականի տվյալներով)

Աղյուսակ 1

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Մսամթերք»	տ	454,9	48,1	«Լինդա» ՍՊԸ	24,3	33
					«Առդելիկատես» ՍՊԸ	13,0	
					«Մուշ» ՍՊԸ	10,8	
2.	«Կարագ»	տ	4143,8	84,0	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	47,8	23
					«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	24,3	
					«Մառնիկ» ՍՊԸ	11,9	
3.	«Պաղպաղակ»	տ	1897,8	70,4	«Աշտարակ Կաթ» ՓԲԸ*	39,3	16
					«Թամարա» ՍՊԸ	18,7	
					«Էլիտ Շանթ» ՍՊԸ	12,4	
4,	«Էթիլային սպիրտ»**	հազ. լիտր	678,4	100	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ*	99,8	3
					«Առաքել Ալկո» ՍՊԸ	0,11	
					«Վեդի Ալկո» ՍՊԸ	0,09	

* նշված տնտեսվարող սուբյեկտը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող
** նշված ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2008 թվականի 2-րդ կիսամյակի տվյալներով:

«Մսամթերք» ապրանքային շուկայի մասնակից են հանդիսանում թվով 33 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից թվով 25-ը արտադրող են, իսկ թվով 8-ը՝ ներմուծող, ըստ 2008 թվականի տվյալների: Մսամթերքի ներմուծման ծավալը 2008 թվականին կազմել է 55,99 տոննա՝ 40233,3 հազար դրամ ընդհանուր արժեքով, արտադրության ծավալը՝ 439,22 տոննա կամ 664839,3 հազար դրամ, իրացման ծավալը կազմել է 454,91 տոննա կամ 1243248,2 հազար դրամ, իսկ արտահանման ծավալը՝ 0, 36 տոննա կամ 361,4 հազար դրամ: «Մսամթերք» ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանում ընդգրկվել են Հայաստանի Հանրապետությունում իրացվող մսամթերքը՝ բաստուրմա, սալ, ապուխտ (վետչինա), խոզապուխտ (բուժենինա), ֆիլե, «Էրեբունի» և նմանատիպ պատրաստի այլ արտադրատեսակներ, որոնք ստացվել են մսից և մսի ենթամթերքից, առանց դրա նախնական վերամշակման (աղալու, մանրացնելու): «Մսամթերք» ապրանքային շուկայում «Գեղարդ մսամթերքի կոմբինատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կորցրել է գերիշխող դիրքը և հանվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում) գրանցումից: 2008 թվականի տվյալներով ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտ չկա: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան: Նախորդ ուսումնասիրության արդյունքների (2004 թվականի տվյալներով) համեմատ մասնակիցների թիվը ավելացել է մեկով, իսկ իրացման ծավալները ավելացել են 2.1 անգամ:

«Կարագ» ապրանքային շուկայի մասնակիցներ են թվով 23 տնտեսվարող սուբյեկտներ, որոնցից թվով 14 տնտեսվարող սուբյեկտներ զբաղվել են ներկրմամբ, թվով 7 տնտեսվարող սուբյեկտներ՝ արտադրությամբ, որոնցից 2-ը զբաղվել են նաև ներկրմամբ, թվով 2 տնտեսվարող սուբյեկտ իրացրել է նախորդ տարվա ապրանքային մնացորդը: Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականի ընթացքում կարագի արտադրությամբ զբաղվող թվով 7 տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրվել է 211,4 տոննա կարագ, ներկրվել է 5 260,4 տոննա կարագ, իրացվել է 4143.8 տոննա: «Կարագ» ապրանքային շուկայում 2008 թվականին «Ալեքս Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ունի գերիշխող դիրք: «Մառնիկ» ընկերությունը՝ 493,530 տոննա կամ 11,91 տոկոս իրացման ծավալով, կորցրել է գերիշխող դիրքը: «Կարագ» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան: Նախորդ ուսումնասիրության արդյունքների (2006 թվականի տվյալներով) համեմատ մասնակիցների թիվը պակասել է մեկով, իսկ իրացման ծավալները ավելացել են 1.4 անգամ:

«Պաղպաղակ» ապրանքային շուկայում գործող թվով 16 տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն, 2008 թվականին Հայաստանի Հանրապետությունում իրացվել է 1 897,8 տոննա պաղպաղակ: Պաղպաղակ արտադրվել է թվով 12 ընկերությունների կողմից՝ 2 105,1 տոննա, արտահանվել է թվով 5 ընկերությունների կողմից՝ 169, 5 տոննա: Հարկ է նշել, որ 2007 թվականին Հայաստանի Հանրապետություն պաղպաղակի ներկրում չի իրականացվել, իսկ 2008 թվականին թվով 4 ընկերությունների կողմից ներկրվել է 32, 3 տոննա պաղպաղակ: «Պաղպաղակ» ապրանքային շուկայում նախորդ ուսումնասիրության արդյունքում գերիշխող դիրք ունեցող համարված «Շանթ Պլյուս» սահմանափակ պատասխանատվությամբ և «Աշտարակ-Կաթ» փակ բաժնետիրական ընկերություններից առաջինը կորցրել է իր դիրքը, իսկ մյուս ընկերությունը 2008 թվականի տվյալներով համարվել է գերիշխող դիրք ունեցող և գրանցվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում: «Պաղպաղակ» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան: Նախորդ ուսումնասիրության արդյունքների (2007 թվականի տվյալներով) համեմատ մասնակիցների թիվը ավելացել է երկուսով, իսկ իրացման ծավալները ավելացել են 21.7 տոկոսով:

«Էթիլային սպիրտ» ապրանքային շուկայում ըստ տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տվյալների՝ 2008 թվականի երկրորդ կիսամյակում արտադրվել է 1 885, 3 լիտր էթիլային սպիրտ: Արտադրված էթիլային սպիրտի 64 տոկոսն օգտագործվել է սեփական արտադրության մեջ: Հայաստանի Հանրապետությունում իրացվել է 678, 4 լիտր էթիլային սպիրտ՝ 813 830, 5 հազ.դրամ արժողությամբ: «Էթիլային սպիրտ» ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունի «Ալեքս Գրիգ» ընկերությունը: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան: Նախորդ ուսումնասիրության արդյունքների (2006 թվականի տվյալներով) համեմատ մասնակիցների թիվը կտրուկ պակասել է, իսկ իրացման ծավալները կիսամյակային տվյալներով կազմում է նախորդ ուսումնասիրության տարեկան իրացման ծավալների 48.4 տոկոսը:

2009 թվականի ընթացքում Հանճնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և
իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները
(2008 թվականի տվյալներով)

Աղյուսակ 2

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Կենցաղում օգտագործվող շիկացման լամպեր»	հազ. հատ	11385,6	78,3	«Սոֆ-Սուս» ՍՊԸ*	56,0	140
					«Խապե Գրուպ»» ՍՊԸ	16,0	
					«Գանջ Գրուպ» ՍՊԸ	6,3	
2.	«Կենցաղում օգտագործվող գազապարպումային լամպեր»	հազ. հատ	463,9	45,7	«Լևոն և Սեդա» ՍՊԸ	18,8	168
					«Եվրոպա» ՍՊԸ	13,9	
					«Սոֆ-Սուս» ՍՊԸ	13,0	
3.	«Լրատվական թերթերի տարածում»**	հազ. հատ	4184,9	81,7	«Պրես Ստենդ» ՍՊԸ*	55,4	9
					«Էքսպրես պլյուս» ՍՊԸ	15,7	
					«Հայփոստ» ՓԲԸ	10,6	
4.	«Հեռուստածրագրերի տարածում»**	հազ. հատ	1906,9	93,5	«Հայփոստ» ՓԲԸ*	71,4	9
					«Պրես Ստենդ» ՍՊԸ	19,8	
					«Էքսպրես պլյուս» ՍՊԸ	2,3	
5.	«Ամսագրերի, հանդեսների տարածում»**	հազ. հատ	987,0	92,7	«Հայփոստ» ՓԲԸ*	78,5	9
					«Վիրպրեսս» ՍՊԸ	9,1	
					«Պրես Ստենդ» ՍՊԸ	5,1	
6.	«Լրագրային թուղթ»	տ	595,2	63,5	«Դեքստեր» ՍՊԸ	29,3	9
					ԱՁ Ոսկանյան Սոնյա	17,3	
					«Եվրոտեքս» ՍՊԸ	16,9	
7.	«Լրատվական թերթերի մանրածախ իրացում»	հատ	5361,9	37,0	«Պրես Ստենդ» ՍՊԸ*	37,0	
8.	«Բենզին»***	հ.տ.	131,6	84,1	«Ֆլեշ» ՍՊԸ*	42,2	5
					«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ	26,5	
					«Քաղ. Պետրոլ Սերվիս» ՍԿ	15,4	
9.	«Դիզելային վառելիք»***	հ.տ.	85,2	87,1	«Ֆլեշ» ՍՊԸ*	51,4	8
					«Սիթի Պետրոլ Գրուպ» ՍՊԸ	25,8	
					«Քաղ. Պետրոլ Սերվիս» ՍԿ	9,9	

* նշված տնտեսվարող սուբյեկտը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող
** նշված ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2008 թվականի 2-րդ կիսամյակի տվյալներով:
*** նշված ապրանքային շուկայի ուսումնասիրությունն իրականացվել է 2009 թվականի 1-ին ինն ամիսների տվյալներով:

«Կենցաղում օգտագործվող շիկացման լամպեր» ապրանքային շուկայում ներկրում իրականացրած 140 տնտեսվարող սուբյեկտների ներկրման ընդհանուր ծավալը կազմել է 11 983,6 հազ. հատ շիկացման լամպ՝ 447 743,7 հազ. դրամ արժեքով: Շուկայի իրացման ծավալը կազմել է 11 385,6 հազ. հատ լամպ՝ 597 517,3 հազ. դրամ ընդհանուր արժեքով: Շուկայի մասնակից 4 տնտեսվարող սուբյեկտ իրացրել է նախորդ տարվա մնացորդը: «Կենցաղում

օգտագործվող շիկացման լամպեր» ապրանքային շուկայում գերիշխող դիրք է գրավում «Սոֆ-Սուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Կենցաղում օգտագործվող գազապարպումային լամպեր» ապրանքային շուկայում ներկրում իրականացրած թվով 184 տնտեսվարող սուբյեկտների ներկրման ընդհանուր ծավալը կազմել է 482,2 հազ. հատ գազապարպումային լամպ՝ 184 120,9 հազ. դրամ արժեքով: Շուկայի իրացման ծավալը կազմել է 463,9 հազ. հատ լամպ՝ 251 370,5 հազ. դրամ արժեքով: «Կենցաղում օգտագործվող գազապարպումային լամպեր» ապրանքային շուկայում չկան գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության ցածր աստիճան:

«Լրատվական թերթերի տարածում» ապրանքային շուկայի ծավալը կազմել է 4184,9 հազ. հատ թերթ: Ուսումնասիրվող ժամանակահատվածում տարածված 4184,9 հազ. հատ թերթից 3375,5 հազ. հատը (80,7 տոկոս) տարածվել է Երևանում, իսկ 809,3 հազ. հատը (19,3 տոկոս)՝ մարզերում: Ընդ որում, թերթերի տարածման ընդհանուր ծավալի 46,8 տոկոսը (1956,5 հազ.թերթ) իրականացվում է դեպի «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփական մանրածախ ցանց՝ կրպակներ: Լրատվական թերթերի բաժանորդագրության ծավալը կազմել է 1177,1 հազ. հատ: Այսպիսով, մանրածախ ցանցում շրջանառվող լրատվական թերթերի ընդհանուր քանակը կազմում է 5361,9 հազ. հատ (բաժանորդագրություն և մանրածախ ցանցում տարածում), որտեղ բաժանորդագրությունը կազմում է 22 տոկոս: «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Հեռուստածրագրերի տարածում» ապրանքային շուկայի ընդհանուր ծավալը կազմել է 1906,9 հազ. հատ, որի 43,1 տոկոսը (822,7 հազ. հատ) տարածվել է Երևանում, իսկ 56,9 տոկոսը (1084,2 հազ. հատ)՝ մարզերում: Նշենք, որ մարզերում հեռուստածրագրերի նկատմամբ պահանջարկը ավելի մեծ է, քան լրատվական թերթերի: Հեռուստածրագրերի բաժանորդագրության ծավալը կազմել է ընդամենը 10143 տպաքանակ: «Հեռուստածրագրերի տարածում» ապրանքային շուկայում «Հայփոստ» ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող: Ընդ որում, հեռուստածրագրերի հիմնական մասը իրացվել է «Հայփոստ» ընկերության կողմից իր սեփական բաժանմունքների միջոցով: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Ամսագրերի, հանդեսների տարածում» ապրանքային շուկայի ընդհանուր ծավալը կազմել է 987,0 հազ. հատ: Ամսագրերի, հանդեսների տարածման ընդհանուր ծավալի 34,6 տակոսը (341,1 հազ. հատ) տարածվել է Երևանում, իսկ մարզերում՝ 65,4 տոկոսը (645, 9 հազ. հատ): Ամսագրերի, հանդեսների բաժանորդագրության ծավալը կազմել է ընդամենը 15244 տպաքանակ: Այսինքն, մանրածախ ցանցում շրջանառվող ամսագրերի ընդհանուր քանակը կազմում է 1002244 տպաքանակ (բաժանորդագրություն և մանրածախ ցանց տարածում), որտեղ

բաժանորդագրությունը կազմում է 1,5 տոկոս: «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությունը տվյալ ապրանքային շուկայում ունի գերիշխող դիրք: Ընդ որում, ամսագրերի, հանդեսների հիմնական մասն իրացվել է «Հայփոստ» ընկերության կողմից՝ իր սեփական բաժանմունքների միջոցով: Ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Լրագրային թուղթ» ապրանքային շուկայի մասնակից թվով 9 տնտեսվարող սուբյեկտի կողմից ներկրվել է 991,2 տոննա և իրացվել՝ 595,2 տոննա, որից 2 տնտեսվարող սուբյեկտ սեփական հրատարակչության համար օգտագործել են համապատասխանաբար՝ 459,2 տոննա և 11,5 տոննա լրագրային թուղթ: «Լրագրային թուղթ» ապրանքային շուկայում չկան գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: «Լրագրային թուղթ» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության միջին աստիճան:

«Լրատվական թերթերի մանրածախ իրացում» ապրանքային շուկայի մանրածախ ցանցում շրջանառվող լրատվական թերթերի ընդհանուր քանակը կազմում է 5361,9 հազ. հատ (բաժանորդագրություն և մանրածախ իրացում), որտեղ բաժանորդագրությունը կազմում է 22 տոկոս, իսկ մանրածախ ցանցի միջոցով իրացումը՝ 78 տոկոս: Մանրածախ ցանցի միջոցով իրացված թվով 4184,9 հազ. հատ լրատվական թերթերի 46,8 տոկոսը (1956540 թերթ) իրականացվել է «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սեփական մանրածախ ցանցի՝ կրպակների միջոցով: «Պրես Ստենդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Լրատվական թերթերի մանրածախ իրացում» ապրանքային շուկայում գրավում է գերիշխող դիրք:

«Բենզին» ապրանքային շուկայում 2009 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում բենզինի ներկրմամբ և իրացմամբ զբաղվել է թվով 5 տնտեսվարող սուբյեկտ, որոնց կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր առմամբ իրացվել է 131,6 հազար տոննա բենզին՝ 49 282 671,1 հազար դրամ ընդհանուր արժեքով, որից սեփական ցանցի միջոցով՝ 71 059,7 տոննա՝ 27658541,6 հազար դրամ ընդհանուր արժեքով, իսկ 60 507,8 տոննա բենզին՝ 21624129,5 հազար դրամ ընդհանուր արժեքով, իրացվել է այլ եղանակներով: «Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը շուկայում պահպանել է իր գերիշխող դիրքը, իսկ «Քաղ Պետրոլ Սերվիս» արտադրական կոոպերատիվը կորցրել է իր գերիշխող դիրքը: «Բենզին» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

«Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ դիզելային վառելիքի ներկրման ընդհանուր ծավալը 2009 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 83286,5 տոննա՝ 16800143,9 հազար դրամ արժեքով, իսկ իրացման ընդհանուր ծավալը՝ 85175,64 տոննա՝ 24528449,5 հազար դրամ արժեքով, որից 13011,1 տոննան իրացվել է սեփական ցանցերի միջոցով և կազմել ընդհանուր իրացման ծավալի 15 տոկոսը: 2009 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին «Ֆլեշ» սահմանափակ պատասխանատվությանբ ընկերությունը «Դիզելային վառելիք» ապրանքային շուկայում պահպանել է գերիշխող դիրքը: «Դիզելային վառելիք» ապրանքային շուկան ունի կենտրոնացվածության բարձր աստիճան:

2009 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված դեղորայքի մի շարք ապրանքային շուկաների իրացման ծավալը, կենտրոնացվածության աստիճանը, մասնակիցների թիվը և իրացման ծավալներով առաջին երեք տեղերը զբաղեցնող տնտեսվարող սուբյեկտները
(2008 թվականի առաջին ինն ամիսների տվյալներով)

Աղյուսակ 3

ՀՀ	Ապրանքային շուկայի անվանումը	չ/մ	Ապրանքային շուկայի իրացման ծավալը	Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը	Ապրանքային շուկայում առաջատար դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների		Ապրանքային շուկայի մասնակիցների թիվը
					անվանումը	բաժինը (%)	
1	2	3	4	5	6	7	8
1.	«Անզգայացնող դեղեր»	մլն. դրամ	225,3	47,54	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	17,79	23
					«Երևանի քիմիա դեղագործական ֆիրմա» ԲԲԸ	15,75	
					«Էսզեթ ֆարմա» ՍՊԸ	14,00	
2.	«Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերիոդային հակաբորբոքային դեղեր, հակահոդատապային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող դեղեր»	մլն. դրամ	1113,2	56,02	«Առգո-Ֆարմ» ՍՊԸ	33,23	34
					«Էսկուլապ» ՍՊԸ	12,02	
					«Արֆարմացիա» ՓԲԸ	10,77	
3.	«Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր»	մլն. դրամ	373,8	58,42	«Ֆարմատեք» ՓԲԸ	28,27	24
					«Լամբրոն-ֆարմիմպեքս» ՍՊԸ	20,50	
					«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ		
					«Ամիկուս» ՍՊԸ	9,65	
4.	«Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր»	մլն. դրամ	147,0	62,20	«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	24,56	20
					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	22,59	
					«Լամբրոն-ֆարմիմպեքս» ՍՊԸ	14,85	
5.	«Հակավարակային դեղեր»	մլն. դրամ	1761,0	54,46	«Ֆարմատեք» ՓԲԸ	30,47	27
					«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	16,34	
					«Աստերիա» ՍՊԸ	7,64	
6.	«Ընչառական համակարգի վրա ազդող դեղեր»	մլն. դրամ	228,5	44,85	«Ֆարմատեք» ՓԲԸ	25,58	26
					«Էսկուլապ» ՍՊԸ	10,40	
					«Քվանտում Ս.» ՍՊԸ	8,87	
7.	«Հակամիգրենային դեղեր»	մլն. դրամ	13,0	39,13	«Ֆարմ Գոհար» ՍՊԸ	14,86	16
					«Արմֆարմ» ՍՊԸ	14,25	
					«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	10,02	
8.	«Հակապարկինսոնային դեղեր»	մլն. դրամ	32,8	55,37	«Օրիենտ ֆարմ» ՍՊԸ	22,69	14
					«Աստերիա» ՍՊԸ	16,34	
					«Ամիկուս» ՍՊԸ	16,34	
9.	«Արյան վրա ազդող դեղեր»	մլն. դրամ	278,1	52,0	«Ֆարմատեք» ՓԲԸ	26,66	21
					«Քվանտում Ս.» ՍՊԸ	12,90	
					«Ամիկուս» ՍՊԸ	12,44	
10.	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	մլն. դրամ	104,9	82,06	«Ամիկուս» ՍՊԸ**	31,94	6
					«Լիկվոր» ՓԲԸ**	31,51	
					«Աստերիա» ՍՊԸ	18,60	
11.	«Սիրտանոթային դեղեր»	մլն. դրամ	1147,7	38,64	«Արֆարմացիա» ՓԲԸ	15,85	30
					«Էսկուլապ» ՍՊԸ	11,71	
					«Տոնուս Լես» ՍՊԸ	11,08	
12.	«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	մլն. դրամ	362,2	60,99	«Ֆարմատեք» ՓԲԸ*	42,52	32
					«Էսկուլապ» ՍՊԸ	10,01	
					«Արփիմեդ» ՍՊԸ	8,46	
13.	«Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ»	մլն. դրամ	174,9	49,24	«Արսենի ԱԱՄ» ՍՊԸ	17,18	24
					«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	16,26	
					«Էսկուլապ» ՍՊԸ	15,80	

14.	«Միզամուղներ»	մլն. դրամ	117,3	54,25	«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ	30,33	21
					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	13,98	
					«Առգո-Ֆարմ» ՍՊԸ	9,94	
15.	«Ստամոքսաղիքային դեղեր»	մլն. դրամ	818,8	44,21	«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	17,88	29
					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	14,96	
					«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ	11,37	
16.	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	մլն. դրամ	780,9	74,38	«Մ.Լ.Ն Ֆարմ» ՍՊԸ*	36,25	24
					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	28,75	
					«Ամիկուս» ՍՊԸ	9,38	
17.	«Իմունաբանական դեղեր»	մլն. դրամ	125,5	66,8	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ*	42,34	16
					«Ամիկուս» ՍՊԸ	16,87	
					«Վագա Ֆարմ» ՍՊԸ	7,59	
18.	«Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինէսթերազի արգելակիչներ»	մլն. դրամ	44,3	70,32	«Վագա Ֆարմ» ՍՊԸ*	39,53	16
					«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ	25,47	
					«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	5,32	
19.	«Ակնաբուժական դեղեր»	մլն. դրամ	325,6	52,2	«Լիկվոր» ՓԲԸ	27,97	24
					«Էսկուլապ» ՍՊԸ	15,19	
					«Ամիկուս» ՍՊԸ	9,04	
20.	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	մլն. դրամ	34,0	81,0	«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ*	43,47	11
					«Վագա Ֆարմ» ՍՊԸ	19,85	
					«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	17,68	
21.	«Հոգեմետ դեղեր»	մլն. դրամ	228,6	63,29	«Էսկուլապ» ՍՊԸ	22,07	15
					«Արփիմեդ» ՍՊԸ	21,10	
					«Լամբրոն-ֆարմիմպեքս» ՍՊԸ	20,12	
					«Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ ՍՊԸ		
22	«Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»	մլն. դրամ	500,4	87,96	«Ֆարմատեք» ՓԲԸ*	49,29	14
					«Լիկվոր» ՓԲԸ	29,95	
					«ԱլֆաՖարմ» ՓԲԸ	8,72	
23.	«Վիտամիններ և հանքանյութեր»	մլն. դրամ	274,8	37,88	«Էսկուլապ» ՍՊԸ	16,87	25
					«Երևանի քիմիա դեղագործական ֆիրմա» ԲԲԸ	10,88	
					«Դեղաբազա Երեւան» ՍՊԸ	10,13	

* նշված տնտեսվարող սուբյեկտը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող

** Ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե իրացման ծավալներով միասին գրավում են ապրանքային շուկայի առնվազն մեկ երկրորդը:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2007 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկը հաստատելու մասին» թիվ 854-Ն հրամանով հաստատած դեղերի դասակարգման խմբերի հիման վրա որոշվել և ուսումնասիրվել են դեղերի շրջանառության ոլորտի թվով 23 ապրանքային շուկաներ: Դեղերի շրջանառության ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունն իրականացվել է 2008 թվականի 9 ամիսների տվյալների հիման վրա: Նշված ապրանքային շուկաների ուսումնասիրության արդյունքներից երևում է, որ 5 ապրանքային շուկաներ («Շնչառական համակարգի վրա ազդող դեղեր», «Հակամիգրենային դեղեր», «Սիրտանոթային դեղեր», «Ստամոքսաղիքային դեղեր», «Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը

կարգավորող լուծույթներ», «Վիտամիններ և հանքանյութեր») ցածր կենտրոնացված են, 13 ապրանքային շուկաներ («Անզգայացնող դեղեր», «Ցավազրկող, տենդամարիչ, ոչ ստերոիդային հակաբորբոքային, հակահոդատապային դեղեր, ռևմատիկ բարդությունների ժամանակ կիրառվող ձևափոխիչներ», «Ալերգիայի, անաֆիլաքսիայի ժամանակ կիրառվող դեղեր», «Հակացնցումային, հակաէպիլեպսային դեղեր», «Հակավարակային դեղեր», «Հակապարկինսոնային դեղեր», «Արյան վրա ազդող դեղեր», «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)», «Վարակազերծիչներ և հականեխիչ միջոցներ», «Միզամուղներ», «Իմունաբանական դեղեր», «Ակնաբուժական դեղեր», «Հոգեմետ դեղեր»)՝ միջին կենտրոնացված, 5-ը («Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ», «Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ», «Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինէսթերազի արգելակիչներ», «Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ», «Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»)՝ բարձր կենտրոնացված: Նշված ապրանքային շուկաներից 7-ում թվով յոթ տնտեսվարող սուբյեկտներ («Ֆարմատեք», «Լիկվոր» փակ բաժնետիրական ընկերություններ, «Ամիկուս», «Մ.Լ.Ն Ֆարմ», «Նատալի Ֆարմ», «Վագա Ֆարմ» , «Ռիխտեր-Լամբրոն» Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններ) համարվել են գերիշխող դիրք ունեցող: Ընդ որում, «Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ» ապրանքային շուկայում «Ամիկուս» սահմանափակ պատասխանատվությամբ և «Լիկվոր» փակ բաժնետիրական ընկերությունները իրացման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը, և յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրք ունեցող: «Ֆարմատեք» փակ բաժնետիրական ընկերությունը գերիշխող դիրք ունեցող է համարվել «Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)» և «Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ» ապրանքային շուկաներում:

Երկաթուղային ծառայությունների ոլորտի ապրանքային շուկաների ուսումնասիրությունը պայմանավորված է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտի փոփոխությամբ: «Երկաթուղային տրանսպորտի ծառայություններ», «Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ», «Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ» ապրանքային շուկաներում «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերությունը համարվել է գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է 100 տոկոսը) և գրանցվել է գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի երկու ապրանքային շուկաներում ուսումնասիրությունն իրականացվել է՝ ելնելով այդ շուկաների առանձնահատկություններից և դրանցում տեղի ունեցած փոփոխություններից: «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը «Համակարգչային գլոբալ ցանցի «.am» տիրույթում հանգուցային անվանումների գրանցման, սպասարկման, համակարգման և

կառավարման ծառայություններ» ապրանքային շուկայում համարվել է մենաշնորհի դիրք ունեցող և գրանցել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում): «Տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ ինտերնետ հասանելիության համար» ապրանքային շուկայում «ԱրմենՏել» փակ բաժնետիրական և «Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններից յուրաքանչյուրը համարվել է գերիշխող դիրք ունեցող (համապատասխանաբար իրացման ծավալներով գրավում են շուկայի 53,9 և 46,1 տոկոսները) և գրանցվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

«Հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ» ապրանքային շուկայում Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համարվել է մենաշնորհի դիրք ունեցող (որպես իրացնող չունի մրցակից) և գրանցվել գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված գրանցամատյանում (ռեեստրում):

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հանձնաժողովն իր աշխատանքները նպատակաուղղել է տնտեսական մրցակցության պաշտպանությանը և խրախուսմանը, բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանը, հակամրցակցային գործունեության կանխարգելմանը, սահմանափակմանը և նախազգուշացմանը, տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությանը, ինչպես նաև ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանությանը: Հանձնաժողովի կողմից իրականացվող գործառույթների մեծ մասը կրել է կանխարգելիչ բնույթ:

Հաշվի առնելով, որ յուրաքանչյուր տարի ամանորին նախորդող և հաջորդող ժամանակահատվածում արձանագրվում են լայն սպառման մի շարք ապրանքների իրացման գների բարձրացման միտումներ, Հանձնաժողովը վերահսկողություն էր սահմանել բենզինի, դիզելային վառելիքի, դեղորայքի, պարենային ապրանքների շուկաներում գործող իրացման առավել մեծ ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գների չհիմնավորված բարձրացման նկատմամբ, իրականացնելով օրենքի հնարավոր խախտումների կանխման և բացահայտման միջոցառումներ:

Հանձնաժողովը 2009 թվականի առաջին եռամսյակում սոցիալական նշանակության մոտ 20 ապրանքատեսակների գների դիտանցում է իրականացրել՝ գների հիմնավորվածությունը պարզելու նպատակով: Իրականացված դիտանցման արդյունքների համաձայն, Երևանի 16 առևտրի օբյեկտներում կարագի, հացի, ձեթի, պանրի, բրնձի, ալյուրի, սուրճի, մսի, ձվի գները հիմնականում կայուն էին, որոշ դեպքերում նվազել էին, ինչին նպաստել են նաև տնտեսվարող սուբյեկտներին մրցակցության օրենսդրության պահանջները խախտելու և դրանք հետագայում բացառելու համար Հանձնաժողովի կողմից տրված նախազգուշացումները: Սակայն, մարտի 3-ին Կենտրոնական բանկի կողմից դրամի լողացող փոխարժեքի անցման քաղաքականությունը խուճապ առաջացրեց տնտեսվարող սուբյեկտների մոտ: Նույն օրը Հանձնաժողովը նախազգուշացրեց տնտեսվարող սուբյեկտներին՝ զերծ մնալ վերոհիշյալ պատճառաբանությամբ գների չհիմնավորված բարձրացումներից, գերիշխող դիրքի չարաշահումներից կամ հակամրցակցային համաձայնություններից: Մարտի 3-5-ը դոլարի փոխարժեքի տատանման պատրվակով արձանագրվեց առաջին անհրաժեշտության մի քանի ապրանքատեսակների գների աճ:

Հաշվի առնելով նշված հանգամանքները, Հանձնաժողովը մի շարք շուկաներում (ձեթի, կարագի, դեղերի, կենցաղային տեխնիկայի) վարույթներ հարուցեց 2009 թվականի մարտի սկզբին դրամի փոխարժեքի տատանման պատճառաբանությամբ մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից ապրանքների իրացման գների բարձրացումների հիմնավորվածությունը կամ

մրցակցության կանոնների հնարավոր խախտումները պարզելու նպատակով: Նախնական գնահատմամբ, այդ շուկաներում մոնիտորինգի ենթարկված առևտրի կետերում գների բարձրացումներն ավելին էին, քան դրա համար հիմք կարող էին հանդիսանալ առկա տնտեսական գործոնները: Վարույթների արդյունքում պարզվեց, որ բոլոր տնտեսվարողները գների բարձրացումը հիմնավորում էին արտարժույթի փոխարժեքի բարձրացմամբ: Ընկերությունները նշել էին, որ ընդհանրապես իրենց իրացման ծավալները դեռևս 2008 թվականի դեկտեմբերից նախորդ տարվա համեմատ կրճատվել են: Դեղերի շուկայում հարուցված վարույթի և ստուգումների արդյունքներից պարզվեց, որ դեղերի շրջանառության ոլորտում առանձնացված 23 ապրանքային շուկաներից 7-ում գերիշխող դիրք ունեցող 6 տնտեսվարող սուբյեկտներից 2009 թվականի փետրվարի 28-ի նկատմամբ մարտի 5-ին, դրամի փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված, մատակարարման գները բարձրացրել էին 2 տնտեսվարող սուբյեկտ: Ստուգումները ցույց են տվել, որ դեղերի գների շեշտակի աճ արձանագրվել է մանրածախ ցանցում՝ դեղատներում: Ընդ որում՝ տարբեր դեղատներում միևնույն դեղի գները բարձրացել էին տարբեր չափերով:

Ամփոփելով ուսումնասիրության և մոնիտորինգի արդյունքները, Հանձնաժողովը պարզել է, որ 2009 թվականի մարտի 3-5-ը ապրանքների իրացման գների բարձրացումներ արձանագրվել էին հիմնականում իրացման մանրածախ ցանցում, իսկ արդեն մարտի երկրորդ կեսից տարադրամի շուկայում խուճապային տրամադրությունների վերացումից և փոխարժեքի կայունացումից հետո նկատվեց ապրանքների իրացման գների նվազում, այդ պատճառով Հանձնաժողովը դադարեցրեց վարույթները:

Հաշվի առնելով, իրավիճակի կայունացման և որոշ ընկերությունների մոտ արձանագրված գների նվազման միտումները, մասնավորապես՝ կենցաղային տեխնիկայի ոլորտում գործող տնտեսվարողների կողմից կիրառվող զեղչային համակարգը, Հանձնաժողովը դադարեցրեց վարույթները: Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովն իրականացրել է դիտանցումներ նաև մարզերում, իսկ ստացված արդյունքները տրամադրել պետական եկամուտների կոմիտեին:

Արդի պայմաններում բարձր կենտրոնացվածության աստիճան ունեցող ապրանքային շուկաներում գործող տնտեսվարող սուբյեկտների և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեության դիտանցումն ունի ոչ միայն սոցիալական, այլ նաև տնտեսական նշանակություն, որի նպատակն է տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ուղղորդել շուկայական տնտեսության կանոնների պահպանմանը: Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է գտնվում կենտրոնացված գրանցամատյանում գրանցված գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը (իրացման ծավալը, գինը, ինքնարժեքը, ինքնարժեքի կառուցվածքը և դրանց փոփոխությունները յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով):

2008 թվականից 2009 թվական են փոխադրվել մի քանի կարևոր գործեր: Մեկը կապված է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության հետ, որի գործունեության վերաբերյալ մի շարք

տնտեսվարող սուբյեկտներից ստացվել են բողոքներ՝ կապված երկաթուղով փոխադրումների սակագների կտրուկ բարձրացման հետ: Սակագների կտրուկ և միակողմանի բարձրացումը՝ առանց համոզիչ հիմնավորվածության, կարող էր հանգեցնել տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող և նախատեսվող արտահանման-ներկրման գործունեության ապակայունացման: Հանձնաժողովի կողմից ընկերության նման գործողությունները կարող էին որակվել որպես բեռնափոխադրումների շուկայում գերիշխող դիրք գրավող տնտեսվարող սուբյեկտի կողմից գների անհիմն բարձրացում, ինչը հանդիսանում է մրցակցային օրենսդրության խախտում: Ընկերության կողմից 2008 թվականի 3-րդ եռամսյակում բեռնափոխադրումներից ստացված շահույթը ներկայացվել էր բացասական մեծությամբ: Հանձնաժողովի կողմից նշանակվել է ստուգում, որի արդյունքում պարզվել է, որ ընկերության կողմից Հանձնաժողով է ներկայացվել սկզբնական հաշվառման փաստաթղթերին, ֆինանսական հաշվետվություններին չհամապատասխանող տեղեկատվություն, քանի որ ընկերությունում ուղևորա և բեռնափոխադրումների առանձնացված հաշվառում, ըստ ինքնարժեքի ծախսային հոդվածների, չի տարվում: Հանձնաժողովը ոչ հավաստի տեղեկություններ ներկայացնելու համար «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը նախազգուշացրել է, ինչպես նաև առաջարկել՝ հնարավոր սեղմ ժամկետում ներդնել ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների իրականացման ծախսերի առանձնացված հաշվառում: Հանձնաժողովի կողմից իրականացված ստուգման վերաբերյալ նյութերը տրամադրվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը: Հանձնաժողովի կանխարգելիչ գործողություններն այդ փաստի վերաբերյալ նպաստել են «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության կողմից սակագնային քաղաքականության ձևավորմանը: Արդյունքում, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն, կոնցեսիոն պայմանագրի մեջ մտցվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Այսպես, պայմանագրի լրամշակված տարբերակում ներառվել է դրույթ, որը կարգավորում է երկաթուղային սակագների որոշման կարգը: Այսպիսով՝ բացառվում է այն իրավիճակը, երբ սակագների բարձրացումը դառնում է իրականություն՝ միայն կոնցեսիոների կողմից դրա վերաբերյալ միակողմանի հայտարարելու դեպքում:

Ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտները, գիտակցելով իրենց պատասխանատվությունը, հիմնականում պահպանում են մրցակցության օրենսդրությամբ սահմանված պահանջները: Մասնավորապես, Հանձնաժողովի կողմից բազմիցս ուսումնասիրություններ են իրականացվել «Զվարթնոց» օդանավակայանում լիցքավորվող ավիավառելիքի գների հիմնավորվածության վերաբերյալ, որոնց արդյունքում առաջարկվել է ավիավառելիքի բացթողնման գների հաշվարկի հատուկ մեթոդիկա: Դրա հիմքում դրված է առավելագույն «մարժան: Արդյունքում, հուլիս ամսվա ընթացքում նավթի գների աճը միջազգային շուկաներում չի անդրադարձել «Զվարթնոց» օդանավակայանում ավիավառելիքի գների վրա:

Ավիավառելիքը վաճառվում էր ֆիքսված գնով և գների աճ տեղի չի ունեցել: Դա եղել է նաև այն բանի շնորհիվ, որ կազմակերպությունը նախկինում ունեցել է ավելի ցածր գնով ձեռք բերված վառելիքի մեծ պաշարներ:

Մեկ այլ դեպքում, հաշվի առնելով գազի և էլեկտրաէներգիայի սակագների կտրուկ աճը, «Գաջ» ընկերությունը Հանձնաժողովին տեղեկացրել է 1 տոննա գաջի բացթողնման գների 20%-ի սահմաններում հարկադրված բարձրացման մասին: Հանձնաժողովը քննարկել է «Գաջ» ՍՊԸ-ի դիմումը, ներկայացված փաստարկները և գաջի բացթողնման գների բարձրացումը ընդունել ի գիտություն: Ընդ որում, գների բարձրացումը տեղի է ունեցել 2009 թվականի ապրիլի 1-ից, ընկերությունը բաց թողնման գները բարձրացրել է 2009 թվականի հուլիսի 1-ից:

2009 թվականին Հանձնաժողովը հարուցել է համակենտրոնացմանն առնչվող 4 վարչական վարույթ: Այսպես, «Կասկադ Բանկ» և «Կասկադ կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպությունները դիմել էին Հանձնաժողով՝ հայտնելով, որ Բանկի հետ փոխկապակցված ընկերության («Կասկադ կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն)՝ Բանկին միանալու վերաբերյալ որոշում է կայացվել: Բանկի և ընկերության վերակազմակերպման պատճառներն են վերջիններիս գործունեության նույն ոլորտը, ակտիվների արդյունավետ օգտագործումը, ֆինանսական շուկայում իրենց կողմից մատուցվող ծառայությունների մասով մրցունակության ավելացումը և հետագա աճը, կառավարումը ռացիոնալ դարձնելու սկզբունքը, ծախսերի կրճատման արդյունքում եկամտաբերության ավելացումը և այլն: Քննարկելով բանկի և ընկերության համակենտրոնացման վերաբերյալ հարցը և հաշվի առնելով, որ առկա չեն ընկերությունների համակենտրոնացումն արգելելու վերաբերյալ հանգամանքներ, Հանձնաժողովը որոշմամբ թույլատրել է բանկի և ընկերության համակենտրոնացումը:

«ՌԳՍ Ստոլիցա» և «Ար Ջի էս Ասեթս Լիմիթեդ» ընկերությունները Հանձնաժողով էին ներկայացրել երկու ընկերությունների համակենտրոնացման հայտարարագրեր: Ըստ հայտարարագրերի, Ար Ջի էս Ասեթսը ստեղծվել է Կիպրոսում: ՌԳՍ Ստոլիցան ռուսաստանյան ընկերություն է և իրականացնում է ապահովագրական գործունեություն: Հայտարարագրի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Ար Ջի Ասեթս» և «ՌԳՍ Ստոլիցա» ընկերությունները գործում են ՀՀ տարածքից դուրս, այն է՝ ոչ ռեզիդենտ կազմակերպություններ են, հետևաբար տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության համաձայն, գործարքը Հանձնաժողովում հայտարարագրման ենթակա չէ: Վարույթը դադարեցվել է:

«Սարանիստ» և «Արմ Գլաս» ընկերությունները դիմել էին Հանձնաժողով հայտնելով, որ ընկերություններն ունեն մեկ սեփականատեր, որը որոշում է կայացրել միացնել իրեն պատկանող ընկերությունները՝ նպատակ ունենալով ավելացնել արտադրության և արտահանման ծավալները, աշխատողների թիվը, ներթափանցել միջազգային շուկաներ մեկ անվամբ: Ըստ ընկերությունների, համակենտրոնացման արդյունքում ապրանքային շուկայի մրցակցային իրավիճակն էականորեն չի փոխվի: Ելնելով վարույթի արդյունքներից, Հանձնաժողովը համարել

է, որ ընկերությունները, որոնք մեկ սեփականատեր ունեն, համաձայն օրենքի, հանդիսանում են անձանց խումբ՝ մեկ տնտեսվարող սուբյեկտ, ուստի հնարավոր չէ դիտարկել մեկ տնտեսվարող սուբյեկտի համակենտրոնացման հայտարարագրման հարցը, հետևաբար վարույթը դադարեցվել է:

«Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնեմասը Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին վաճառելու վերաբերյալ՝ 2009 թվականի գրության հիման վրա հարուցված վարչական վարույթը դադարեցվել է, հաշվի առնելով, որ ընկերությունը և բանկը Օրենքի իմաստով հանդիսանում են անձանց խումբ՝ մեկ տնտեսվարող սուբյեկտ:

Հանձնաժողովը 2009 թվականի ընթացքում ուսումնասիրություններ է իրականացրել անբարեխիղճ մրցակցության դրսևորումների առնչությամբ:

Այսպես, «Ալեքս-Գրիգ» ընկերության կողմից օղու արտադրության և իրացման ընթացքում ուկրաինական («Սոյուզ Վիկտան») ընկերությանը պատկանող «Medoff» («Մեդոֆֆ») անվանումով օղու ապրանքային նշանին և արտաքին տեսքին շփոթության աստիճան նման «Medofe» («Մեդոֆե») անվանումով ապրանքային նշանի օգտագործումը, որը կարող էր շփոթություն առաջացնել այլ տնտեսվարող սուբյեկտին պատկանող ապրանքային նշանի նկատմամբ, Հանձնաժողովի կողմից որակվել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն: Մեկ այլ դեպքում, վերը նշված ընկերության կողմից արտադրվող և իրացվող («Պրեզիդենտսկիյ ստանդարտ») անվանումով օղու պիտակների վրա Ուկրաինայի պետական դրոշի և գերբի զետեղումը, ինչպես նաև պիտակների վրա օղու վերաբերյալ ծանոթագրական գրառումները ուկրաիներեն կատարելը այն դեպքում, երբ տվյալ օղին արտադրվում և իրացվում էր Հայաստանում, կարող էր առաջացնել հասարակության մոլորեցում ապրանքի աշխարհագրական ծագման նկատմամբ, Հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցում՝ անբարեխիղճ մրցակցության գործողություն: Օրենքի յուրաքանչյուր խախտման համար «Ալեքս-Գրիգ» ընկերության նկատմամբ նշանակվել է տուգանք՝ հինգ հարյուր հազար դրամի չափով: Ընկերությանը հանձնարարվել է դադարեցնել և հետագայում բացառել նշված ապրանքային նշաններով օղու ապօրինի արտադրությունն ու իրացումը, մեկամսյա ժամկետում հանել այն շրջանառությունից:

Հատկանշական է, որ նույն ընկերության նկատմամբ, մի քանի ամիս անց, Հանձնաժողովը վարույթներ է հարուցել «Մանուկյան և գործընկերներ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության դիմումի հիման վրա, որն օղու արտադրությամբ զբաղվող ռուսական մի քանի ընկերությունների՝ մտավոր սեփականության հարցերով շահերի ներկայացուցիչն է Հայաստանում: Համաձայն դիմումի, «Ալեքս Գրիգ» ընկերությունն արտադրում է օղիներ, որոնց ապրանքային նշանները շփոթության աստիճան նման են ռուսական մի շարք ընկերությունների արտադրած օղիների ապրանքային նշաններին («Парламент» («Պարլամենտ»), «Русский Бриллиант» («Ռուսսկիյ Բրիլլիանտ»), «Буфетная традиция» («Բուֆետնայա Տրադիցիյա»)): Ըստ դիմումի, տվյալ ապրանքային նշանները ռուսական ընկերությունների կողմից միջազգային

գրանցում են ստացել և ենթակա են պահպանման նաև Հայաստանի Հանրապետությունում: Հանձնաժողովը «Ալեքս Գրիգ» ընկերության վերոհիշյալ վարքագիծը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության գործողություն և երեքից յուրաքանչյուր դեպքի համար, Օրենքի համաձայն, տուգանել է 500000 դրամ (ընդհանուր առմամբ՝ 1500000 դրամ): Ընկերությանը հանձնարարվել է դադարեցնել և հետագայում բացառել նշված ապրանքային նշաններով օղու ապօրինի արտադրությունն ու իրացումը, մեկամսյա ժամկետում հանել այն շրջանառությունից:

«Հայկական գովազդային խորհուրդ» հասարակական կազմակերպությունը դիմել է Հանձնաժողով, խնդրելով քննարկել իրենց կողմից ներկայացվող տնտեսական մրցակցության օրենսդրության հնարավոր խախտումները: Հայկական գովազդային խորհրդին իր հերթին դիմել էր «Երևանի գարեջուր» ընկերությունը, խնդրելով մասնագիտական պարզաբանում տալ «Գյումրի գարեջուր» ընկերության կողմից գովազդվող հոլովակի օրինական լինելու վերաբերյալ: Ինչը վերաբերում էր ՀՀ մի շարք հեռուստաալիքներով հեռարձակվող «Գյումրի գարեջրի» գովազդին, որտեղ հեռուստաանիմացիայի օգտագործմամբ խեցգետինը Գյումրի գարեջրի ապրանքանիշով գարեջրի շիշը տեղադրում է մրցահարթակի առաջին տեղում, ինչով, ըստ «Երևանի գարեջուր» ընկերության, փորձ է արվում սպառողների մոտ ստեղծել թյուրըմբռնում գարեջրի շուկայում ներկայացված հայաստանյան ընկերությունների զբաղեցրած դիրքի և վարկանիշի մասին: Ուսումնասիրելով գովազդող տեսահոլովակը, Հանձնաժողովը գտել է, որ տվյալ հոլովակում առկա չեն անբարեխիղճ մրցակցության դրսևորման երևույթներ: Նկատի ունենալով վերոնշյալը, Հանձնաժողովը դադարեցրել է վարույթը:

2009 թվականի մարտին գրությամբ քաղաքացին է դիմել Հանձնաժողով՝ հայտնելով, որ «ԱրմենՏել» ընկերության հետ կնքել է վերջինիս կողմից CDMA ֆիքսված կապի անսահմանափակ ինտերնետային ծառայության տրամադրման պայմանագիր, համաձայն որի, «ԱրմենՏել» ընկերությունը պարտավորվել է ապահովել տվյալների ստացում և փոխանցում մինչև 115,2 կբ/վ արագությամբ, սակայն իրեն հաջողվել է բեռնել ինֆորմացիա ավելի փոքր արագությամբ և շատ հաճախ վերոնշյալ ծառայությունը իր համար եղել է անհասանելի: Դիմումատուն խնդրել է պարտավորեցնել «ԱրմենՏել» ընկերությանը՝ կատարելու պայմանագրով նախատեսված և վերջինիս պաշտոնական կայքում հրապարակված պարտավորությունները, ապահովել անխափան CDMA ֆիքսված կապի ինտերնետային ծառայությունը, համապատասխանեցնելով այն կայքում հրապարակված չափանիշներին, ինչպես նաև բարձրացնել «ԱրմենՏել» ընկերության անբարեխիղճ գործունեության պատճառով բաժանորդներին հասցված բարոյական վնասի հատուցման հարցը: Հանձնաժողովի կողմից հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի շրջանակներում «ԱրմենՏել» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն, իրենք քաղաքացու կողմից CDMA ինտերնետ ծառայության որակի հետ կապված ստացել են մի քանի դիմում-բողոքներ, որոնց տրվել են պատասխաններ, նույնիսկ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ «ԱրմենՏել» ընկերությունը չունի ֆիքսված CDMA ինտերնետ ծառայության մատուցման պայմանագիր հիշյալ

քաղաքացու հետ: Ըստ «ԱրմենՏել» ընկերության, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ: Քննարկելով դիմումը, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը եզրակացրել է, որ հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման, քանի որ դիմումատուի և «ԱրմենՏել» ընկերության միջև պայմանագիր կնքված չէր:

Հանձնաժողովը 2009 թվականին կարճել է անբարեխիղճ մրցակցության դրսևորման հետ կապված ևս մեկ վարչական վարույթ: Այսպես, «Լաերտ և Ռոբերտ» ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ իրենց ընկերությունը զբաղվում է ավտոմեքենաների պահեստամասերի առքուվաճառքով և վաճառակետի ցուցափեղկերում փակցված են տվյալ մակնիշների ավտոմեքենաների ֆիրմային նշանները: Դիմումում նշվել է, որ իրենց է դիմել «Վիտտորիա» իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունը, հայտնելով, որ ստանձնել է գերմանական ընկերության իրավական շահերի պաշտպանությունը և նշել, որ «BMW»-ին պատկանող ապրանքանիշը «Լաերտ և Ռոբերտ» ընկերության կողմից օգտագործվում է ապօրինի, միաժամանակ պահանջել է դադարեցնել իրավախախտումը և այդ մասին 7-օրյա ժամկետում տեղեկացնել իրենց: «Լաերտ և Ռոբերտ» ընկերությունը հայտնել էր նաև, որ հիմնականում զբաղվում է «BMW» ավտոմեքենաների պահեստամասերի առքուվաճառքով և ցուցափեղկերից հանելով տվյալ ապրանքանշանը, չի կարող գովազդել և իրացնել պահեստամասերը: Հաշվի առնելով նշվածը, ընկերությունը խնդրել է հանգամանորեն ուսումնասիրել և պարզել «Վիտտորիա» ընկերության գործողությունների օրինականությունը: Հանձնաժողովի կողմից հարուցված վարչական վարույթի ընթացքում «Վիտտորիա» ընկերությունը ներկայացրել է համապատասխան փաստարկներ և փաստաթղթեր: Իսկ «Լաերտ և Ռոբերտ» ընկերությունը նոր դիմում է ներկայացրել Հանձնաժողով՝ հայտնելով, որ «BMW» ապրանքային նշանը ցուցափեղկերից հանել է, որով, փաստորեն, կատարել է «Վիտտորիա» ընկերության պահանջը և խնդրել դադարեցնել վարույթը: Հանձնաժողովը կարճել է վարույթը:

ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչությունը գրությամբ, հետագա ընթացքը լուծելու համար, Հանձնաժողովին է տրամադրել «Նաիրիտ» ապրանքային նշանը ապօրինի օգտագործելու վերաբերյալ նախապատրաստված նյութերը: Ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «Նաիրիտ գործարան» ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող ապրանքային նշանը ապօրինի օգտագործվել է այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից, ինչը սպառողների մոտ կարող էր առաջացնել շփոթություն «Նաիրիտ գործարան» ընկերության ապրանքային նշանի նկատմամբ: Տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրված և իրացված սոսինձների պիտակների վրա «NAIRIT» («Նաիրիտ») ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը համարվել է անբարեխիղճ մրցակցության գործողություն: Տնտեսվարող սուբյեկտներին տրվել է նախազգուշացում և խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն:

Հանրապետության ապրանքային շուկաների մեծ մասում առկա են այնպիսի գործոններ, որոնք նպաստում են ընկերությունների միջև հակամրցակցային համաձայնությունների կնքմանը: Տնտեսվարող սուբյեկտների միջև հակամրցակցային համաձայնությունների բացահայտումը և կանխումը բավականին ժամանակատար է և դժվար ապացուցելի: Դա պայմանավորված է կնքվող համաձայնությունների գրավոր ամրագված չլինելու (հիմնականում դրանք կրում են բանավոր բնույթ), ինչպես նաև փաստաթղթային ստուգումների ընդգրկման շրջանակների սահմանափակ լինելու հանգամանքներով: Նշված գործոնները մրցակցային մարմնին հնարավորություն չեն տալիս ժամանակին կանխել տնտեսվարող սուբյեկտների՝ մրցակցությունը սահմանափակող համաձայնեցված գործողությունները:

ՋԼՄ հրապարակումների, ստացված բազմաթիվ դիմում բողոքների, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից 2009 թվականի սեպտեմբեր-նոյեմբերին իրականացված դիտանցումների համաձայն արձանագրվել են սիրտ անոթային, հակաշաքարախտային, հակավիրուսային և այլ դեղամիջոցների իրացման գների բարձրացումներ: Այս փաստի հիման վրա Հանձնաժողովը դեղերի շրջանառության ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից օրենքի հնարավոր խախտումների բացահայտման նպատակով հարուցել էր վարչական վարույթ, որն ընդգրկել է դեղերի շրջանառության ոլորտում ներկրման ծավալներով առնվազն 1 տոկոս բաժին ունեցող, ինչպես նաև դեղերի արտադրությամբ զբաղվող 25 տնտեսվարողների վարքագծի ուսումնասիրությունը: Հանձնաժողովը վարույթի ընթացքում ուսումնասիրել է տվյալ տնտեսվարողների կողմից 2009 թվականի հունվար-սեպտեմբերին 38 անուն դեղի արտադրության, ներկրման և իրացման ընդհանուր ծավալների, ինչպես նաև մինչև նոյեմբերի 15-ը դրանցից յուրաքանչյուրի մեկ միավորի գնի կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ընկերություններից երկուսը իրացման գնի փոփոխության համար որպես հիմնավորում նշել են դրամի արժեզրկումը: Մինչդեռ՝ ըստ ՀՀ Կենտրոնական բանկի տեղեկատվության, ԱՄՆ 1 դոլարի փոխարժեքը ամսական կտրվածքով սեպտեմբերին աճել է 1,91, հոկտեմբերին՝ 1,51 և նոյեմբերին՝ 0.4 տոկոսներով, իսկ եվրոյինը, համապատասխանաբար՝ 3.96, 3.37 և 1.05 տոկոսներով: Այսինքն, տարադրամների փոխարժեքների աճի տեմպերը նույնիսկ նվազել էին սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին և, բնականաբար, էական ազդեցություն չէին կարող ունենալ իրացման գների բարձրացման վրա: Ուսումնասիրված 38 անուն դեղերից մեծ մասի դեպքում գնի կառուցվածքում առկա էին չհիմնավորված բաղադրիչներ և որպես ապացույց ընտրվել են 11-ը: Հակամրցակցային համաձայնության էին եկել 7 տնտեսվարող սուբյեկտներ: Վարույթի նյութերի վերլուծությունից հետևում էր, որ ուսումնասիրված դեղերի՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից ձեռքբերման գների անփոփոխ մնալու կամ ոչ զգալի փոփոխության պարագայում, զգալիորեն, ոչ համարժեք և որոշակի ժամանակահատվածում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին բարձրացվել են իրացման գները: Տնտեսվարողների այս վարքագիծը, որն ուղղակի կամ անուղղակի հանգեցնում կամ կարող էր հանգեցնել ապրանքային շուկայում մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը, փաստորեն հակամրցակցային համաձայնություն է: Հակամրցակցային

համաձայնության և մրցակցության սահմանափակման համար վերոհիշյալ ընկերություններից յուրաքանչյուրին Հանձնաժողովը տուգանեց յուրաքանչյուրի նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի չափով: Միաժամանակ, վերոհիշյալ ընկերություններին հանձնարարվեց շտկել խախտումը: Վարույթի նյութերը և ուսումնասիրության արդյունքները տրամադրվեցին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

Հանձնաժողովի գործունեության, այդ թվում նաև՝ Հանձնաժողովի կողմից ստուգումների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով, մշակվել են որոշ օրենսդրական փոփոխություններ՝ հաշվի առնելով միջազգային համապատասխան կառույցների, մասնավորապես, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի (OSCE), Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ), ինչպես նաև Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի կարծիքներն ու առաջարկությունները:

Եվրոպական փորձագետները, մասնավորապես, առաջարկել են Օրենքի լրամշակումներում ներառել հանդուրժողականության սկզբունքի վերաբերյալ դրույթներ: Այն ներման համակարգ է, որը կարող է կիրառվել հակամրցակցային համաձայնություններ կնքած (կայացրած, այդ համաձայնությանը մասնակցած) այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք այդ համաձայնության կնքման (կայացման) փաստի մասին կամավոր կտեղեկացնեն Հանձնաժողովին: Փորձագետները, միաժամանակ, առաջարկում են բարձրացնել հակամրցակցային համաձայնություններ կնքելու (կայացնելու, դրան մասնակցելու) համար սահմանված տուգանքի չափը. ներկայումս գործող՝ խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտի նախորդ տարվա հասույթի 2 տոկոսի փոխարեն մինչև 10 տոկոս, որն էլ կհանգեցնի հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը, դրանց թվի նվազմանը: Վիճակագրությունը վկայում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ կիրառվում է հանդուրժողականության սկզբունքը, հակամրցակցային համաձայնությունների 80 տոկոսից ավելին բացահայտվում է նշված եղանակով:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 251-րդ կետի և գերակա խնդիրների ցանկի 86-րդ կետի համաձայն, Հանձնաժողովը 2009 թվականի դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն է ներկայացրել ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը (այսուհետ՝ Նախագիծ)՝ համապատասխան հիմնավորումներով: Նախագծերը մշակելիս հաշվի են առնվել նաև Հայաստանի

Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1272-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 78.2-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 4-ի նիստի թիվ 49 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում Հայաստանի Հանրապետության վարչապետի ելույթից բխող միջոցառումների ցանկի 3.4.1-րդ կետը:

Ներկայացված նախագծով հստակեցվել են Օրենքի հիմնական հասկացությունները, Հանձնաժողովի կողմից դիտանցումների իրականացման հետ կապված հարաբերությունները, տնտեսական մրցակցությանն առնչվող հարցերի հանրային լուսաբանմանն, ինչպես նաև Հանձնաժողովի և այլ պետական մարմինների համագործակցությանն առնչվող դրույթները: Փոփոխվել են պատասխանատվությանը վերաբերող որոշ դրույթներ, այդ թվում նաև՝ Օրենքի խախտման համար նշանակվող տուգանքների որոշ չափեր, ըստ իրավախախտման բնույթի և դրանց ծանրության աստիճանի: Հանվել է նաև պետական օժանդակություն ստանալու համար տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ տուգանք կիրառելու վերաբերյալ դրույթը:

Հանդուրժողականության սկզբունք է սահմանվել հակամրցակցային համաձայնություն կնքած այն տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, որոնք կհամագործակցեն Հանձնաժողովի հետ՝ նշված խախտումը բացահայտելու ուղղությամբ: Որպես Օրենքի հնարավոր խախտումը կանխող միջոցառում, սահմանվել է նաև Հանձնաժողովի որոշմամբ տնտեսվարող սուբյեկտներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և նրանց պաշտոնատար անձանց զգուշացում տալու հնարավորությունը:

Նախատեսված են նաև փոփոխություններ, որոնք սահմանում են, թե որ դեպքերում է մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող, այդ թվում նաև՝ հակամրցակցային համաձայնությունների մասնակից տնտեսվարող սուբյեկտների կողմից կիրառվող գների բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը համարվում չհիմնավորված:

Համապատասխան լրամշակումներ են կատարվել նաև Օրենքի 4-րդ գլխում: Նախագծով հստակեցվել են համակենտրոնացման մասնակիցները, ինչպես նաև համակենտրոնացումը գործողության մեջ դնելու պահը: Սահմանվել են իրավակիրառ տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցող համակենտրոնացման տեսակները: Տնտեսվարող սուբյեկտներին ծանրաբեռնվածությունից զերծ պահելու նպատակով որոշակիորեն նվազեցվել է համակենտրոնացման հայտարարագրման համար տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող տեղեկատվության ծավալը: Սահմանվել է նաև, որ գերիշխող դիրքի հանգեցնող համակենտրոնացումը չի արգելվում նաև այն դեպքերում, երբ այն նպաստում է տնտեսվարող սուբյեկտի մրցունակության բարձրացմանը, աշխատատեղերի ստեղծմանը, տեխնիկական կամ տեխնոլոգիական զարգացմանը:

Հանձնաժողովն ընդունել է «Ապրանքային շուկայում գերիշխող դիրքի չարաշահման հարցի վերաբերյալ պաշտոնական պարզաբանման մասին» և «Համակենտրոնացման վերաբերյալ պաշտոնական պարզաբանման մասին» որոշումները, որոնք սահմանված կարգով ներկայացվել են հրապարակման: Հանձնաժողովի որոշմամբ փոփոխություն է կատարվել Հանձնաժողովի 2008 թվականի հունվարի 21-ի «Տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման հայտարարագրման կարգի և հայտարարագրի ձևի մասին» թիվ 01-Ն որոշման մեջ:

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների հետ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Հանձնաժողովը կնքել է համագործակցության հուշագրեր: Մասնավորապես, ելնելով էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի արդյունավետ կարգավորման, ոլորտում ազատ մրցակցության երաշխավորման, տնտեսվարող սուբյեկտների ու սպառողների շահերի պաշտպանության նկատառումներից, 2009 թվականի դեկտեմբերի 26-ին Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի միջև ստորագրվել է փոխհամագործակցության հուշագիր:

Պետական գնումների գործընթացի արդյունավետության բարձրացման, հնարավոր ու փաստացի հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման ու բացահայտման, վարչական վարույթների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև գնումների ընթացքում մրցակցությանն առնչվող այլ խնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը 2009 թվականի դեկտեմբերին համաձայնություն են կայացրել նշված ուղղություններով համագործակցելու վերաբերյալ:

2009 թվականի դեկտեմբերի 29-ին համագործակցության համաձայնագիր է կնքվել նաև Հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև՝ երկկողմանի համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական առաջարկություններ նախապատրաստելու ու ներկայացնելու, ինչպես նաև մրցակցության պաշտպանության բնագավառում առկա խնդիրների կապակցությամբ համատեղ քննարկումներ ու խորհրդակցություններ կազմակերպելու և իրականացնելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության տարածքում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում իրականացվող պետական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու, փոքր և միջին բիզնեսի համար տնտեսական մրցակցության պաշտպանության առավել բարենպաստ միջավայր ապահովելու, եվրոպական լավագույն փորձի հիման վրա Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից փոքր և միջին բիզնեսի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ոլորտում տրամադրվող ծառայությունների որակն ու արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ Հանձնաժողովի, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի և «BRAVE» իրավաբանական ընկերության միջև հոկտեմբեր ամսին ստորագրվել է եռակողմ հուշագիր:

Միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումների ներդրման և կիրառման անհրաժեշտությունը կարևորելով, Հանձնաժողովն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում միջազգային կապերի ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության սերտացմանը:

Միջազգային գործունեության և համագործակցության շրջանակներում տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության կիրարկման հիմնական ուղղություններին և գերակա խնդիրներին համապատասխան, Հանձնաժողովը 2009 թվականին շարունակել է հետևյալ գործընթացները.

համագործակցություն ինստիտուցիոնալ զարգացման նպատակով,

համագործակցություն տնտեսական մրցակցության օրենսդրությունը միջազգային չափորոշիչներին և մեխանիզմներին համապատասխանեցնելու նկատառումով՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերի հրամայականները,

իրականացրել է համատեղ ուսումնասիրություններ արտերկրյա մրցակցության մարմինների հետ,

իրականացրել է փորձի փոխանակում և լավագույն փորձի կիրառում,

ընդլայնել է քարոզչությանն ուղղված միջոցառումները,

իրականացրել է մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

Բազմակողմ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակել է մասնակցել Միջազգային մրցակցության ցանցի (ՄՄՑ/ICN), ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (ՀՔՄԽ/МСАП), Տնտեսական համագործակցության զարգացման կազմակերպության և ՄԱԿ-ի առևտրի և զարգացման հարցերով համաժողովի (ՄԱԱԶՀ/UNCTAD) տարեկան նիստերին և հանդիպումներին, ինչպես նաև աշխատանքային խմբերի ընթացիկ աշխատանքներին: Համագործակցությունների արդյունքում նախագծվում և հաստատվում են մրցակցության քաղաքականության կիրարկման և օրենսդրությունների համապատասխանեցման առումով համատեղ գործողությունների շրջանակները, լավագույն փորձն ու համատեղ ուսումնասիրությունների իրականացման մեխանիզմները:

Բազմակողմանի համագործակցության շրջանակներում Հանձնաժողովն ակտիվ մասնակցել է ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատանքներին և վերջինիս կողմից հաստատված ապրանքային շուկաների («Ավիաուղևորափոխադրումներ», «Ցեմենտ» և «Էլեկտրաէներգիա») համատեղ ուսումնասիրությունների իրականացմանը:

Մրցակցային օրենսդրության հնարավոր խախտումները հայտնաբերելու նպատակով Հանձնաժողովը Ռուսաստանի Դաշնության հակամենաշնորհային ծառայության հետ համատեղ, Խորհրդի համագործակցության շրջանակներում «Ավիաուղևորափոխադրումներ» ապրանքային շուկայում իրականացրել է ուսումնասիրություններ Երևան-Եկատերինբուրգ-Երևան և Երևան-

Մոսկվա-Երևան ուղղություններով: Աշխատանքները նշված ուղղությամբ դեռևս շարունակվում են: Հեռահաղորդակցության ոլորտում իրականացված ուսումնասիրությանը մասնակցել են հինգ անդամ երկրներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Հանձնաժողովի, որի կատարած աշխատանքները Խորհրդի կողմից գնահատվել են դրական:

Հանձնաժողովը, որպես հյուրընկալող մարմին, 2009 թվականի հոկտեմբերին Երևան քաղաքում կազմակերպել է Հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդի 30-րդ հոբելյանական և ԱՊՀ անդամ պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման համատեղ ուսումնասիրությունների շտաբի 13-րդ (այսուհետ՝ Շտաբ), ինչպես նաև Խորհրդի ներքո գործող Գովազդի կոորդինացիոն խորհրդի նիստերը:

Նիստերի ժամանակ քննարկվել են հետևյալ հարցերը. ՀՔՄԽ 29-րդ նիստում կայացված որոշումների իրականացման ընթացքը, Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության և զարգացման միտումների իրավիճակը, ՀՔՄԽ նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ԱՊՀ անդամ պետություններում տեղի ունեցած առավել նշանակալի իրադարձությունները, ԱՊՀ անդամ պետություններում հակամենաշնորհային օրենսդրության խախտման շուրջ կատարված համատեղ ուսումնասիրությունների վերաբերյալ աշխատանքային խմբի գործունեության արդյունքը, ԱՊՀ անդամ պետությունների հակամենաշնորհային մարմինների կողմից գովազդի մասին օրենսդրության կիրառումը և այլն: Հոբելյանական նիստին մասնակցել են Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հանրապետության նախագահի աշխատակազմի, Ազգային ժողովի ներկայացուցիչներ և այլ պաշտոնատար անձինք, ինչպես նաև ԱՊՀ անդամ պետությունների, Ռումինիայի, Հունգարիայի և Ավստրիայի հակամենաշնորհային մարմինների ղեկավարներ ու ներկայացուցիչներ, Հայաստանի Հանրապետությանում Եվրամիության դեսպանատան, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (ԳՏՀ/GTZ, ԵԱՀԿ/OSCE, ՀԵՔԻԽԿ/AEPLAC, ՀԲ/WB) ներկայացուցիչները:

Միջազգային մրցակցակցության ցանց կազմակերպության (ICN) անդամակցության շրջանակներում Հանձնաժողովը 2009 թվականի հունիսին մասնակցել է Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում կազմակերպված ICN-ի միջազգային 8-րդ տարեկան համաժողովին:

Հանձնաժողովն իրականացրել է իր իրավասությանը վերաբերող հարցերի շուրջ միջազգային պայմանագրերով նախատեսված գործառույթները, մասնավորապես՝ Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետ՝ ԵՀՔ) ՀՀ-ԵՄ համագործակցության և Ազատ առևտրի ու համապարփակ համաձայնագրի (ԱԱԽՀՀ) հնարավոր ապագա բանակցությունների նախապատրաստական գործընթացի շրջանակներում:

ԵՀՔ շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում համագործակցությունը հիմնականում ուղղված է եղել Թվինինգ (Twinning) գործիքի կիրառմամբ նպատակային նոր ծրագրերի և 2009 թվականին հավանության արժանացած «Մրցակցային և

պետական օժանդակության օրենսդրության կիրարկման հզորացումը Հայաստանում» ծրագրի տեխնիկական առաջադրանքի մշակմանը:

Հանձնաժողովը՝ Հայ-Եվրոպական քաղաքականության և իրավական խորհրդատվության կենտրոնի (ՀԵՔԻԽԿ/AEPLAC) հետ համագործակցության շրջանակներում, համագործակցել է ՀԵՔԻԽԿ-ի հետ և մասնակցել Հայաստանի Հանրապետության ԵՀՔ գործողությունների ծրագրի կատարման ընթացքի համար պատասխանատու կառույցների ներկայացուցիչների իրազեկվածության բարձրացմանը և կարողությունների հզորացմանն ուղղված դասընթացներին:

Հանձնաժողովը, ՀՀ-ում գործող միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակում, բանակցություններ է վարել Գերմանիայի տեխնիկական համագործակցության (ԳՏՀ/GTZ) ընկերության հետ, որի արդյունքում համաձայնություն է ձեռք բերվել «Մասնավոր հատվածի զարգացումը Հարավային Կովկասում» ծրագրի ներքո մրցակցության քաղաքականության կիրարկման բարելավմանն ուղղված համատեղ գործողությունների ծրագիր իրականացնելու վերաբերյալ: Հանձնաժողովի և ԳՏՀ-ի միջև 2009 թվականի աշնանը ստորագրվել է հուշագիր, որի հիմնական ուղղություններն են՝ մրցակցության օրենքի որոշ դրույթների բարեփոխման առաջարկների տրամադրում, որոնք կնպաստեն հակամրցակցային համաձայնությունների բացահայտմանը՝ պատժամիջոցների մեղմման ծրագիր, ստուգումների իրավասության ընդլայնում, միջազգային փորձագետի խորհրդատվություն՝ բարդ գործերի վարման վերաբերյալ, մրցակցության քաղաքականության վերաբերյալ Վարչական դատարանի դատավորների ուսուցում (վերապատրաստում), Հայաստանի Հանրապետությունում մրցակցության քաղաքականության մասին տեղեկացվածության բարձրացում, Հանձնաժողովի և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ինչպես նաև Կենտրոնական բանկի միջև համագործակցության համապատասխանեցում Եվրամիության չափանիշներին: Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների համար կազմակերպվել են դասընթացներ՝ «Հանդուրժողականության սկզբունքը» թեմայով, Եվրամիության, մասնավորապես՝ Գերմանիայի առաջավոր փորձը կիրառելու և համապատասխան շուկաները հատկորոշելու համար, ուսուցանելով ուսումնասիրված իրական գործերի օրինակները:

Նպատակ ունենալով զարգացնել տնտեսական մրցակցության քաղաքականության կիրարկման մեխանիզմները և հաշվի առնելով Համաշխարհային բանկի աջակցությունը Հայաստանի Հանրապետությունում նոր ծրագրերի ֆինանսավորման համար, Հանձնաժողովը Համաշխարհային բանկին ներկայացրել է իր առաջարկները հետագա համագործակցության առաջնահերթ ուղղությունների վերաբերյալ: Արդյունքում, Համաշխարհային բանկի փորձագետի՝ Հայաստանի Հանրապետություն այցի շրջանակներում, ներկայացվել է «ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը և քաղաքականությունը. առաջնային բարելավման ուղղությունները» զեկույցը: Համաձայն զեկույցի՝ Համաշխարհային Բանկի հետ առաջիկա աշխատանքները միտված են լինելու զեկույցում նշված խնդիրների ուղղությամբ համատեղ ջանքերով իրականացվող բարեփոխումների իրագործմանը:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրված «Հայաստանի Հանրապետության զարգացման քաղաքականության վարկի (ԶՔՎ) երկրորդ ծրագրի նախապատրաստման կանխավճարի թիվ ՄԶԸ Ք670-ԱՄ» վարկային ծրագրի շրջանակում ներկայացվել է «Մրցակցության քաղաքականության կարգավորիչ դաշտի հզորացում» տեխնիկական աջակցության ծրագիրը: Ծրագրի հիմնական ուղղություններն են՝ վերանայել գործող ազգային մրցակցային օրենսդրությունը և ենթաօրենսդրական ակտերը, գնահատել Հանձնաժողովի կարիքները և դրանց իրագործման ծախսերը, կազմակերպել սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև մշակել Հանձնաժողովի ֆինանսական կայունության աղբյուրները երաշխավորող հաշվետվություն, որով կառաջարկվի Հանձնաժողովի ֆինանսական անկախությունը որոշակիորեն ապահովելու համար ներգրավել ֆինանսական միջոցներ՝ բարձր որակավորմամբ մասնագետներ ներգրավելու և աշխատատեղերում մասնագետներին պահելու նպատակով:

Եվրոպայի անվտանգության համագործակցության կազմակերպության երևանյան (ԵԱՀԿ/OSCE) գրասենյակի հետ համագործակցության շրջանակում իրականացվել է «Հակամրցակցային համաձայնություններ՝ դիտանցման կանոնների և առկա մեթոդների գնահատման» ծրագիրը: Այն ուղղված է բարելավելու Հանձնաժողովի մոնիտորինգի և գնահատման մեխանիզմները, ինչպես նաև բարձրացնելու մրցակցային օրենսդրության կիրառման արդյունավետությունն ու տնտեսական մրցակցության կանոնների վերաբերյալ հստակ պատկերացումները: Ծրագրի շրջանակում հրապարակվել է «Հակամրցակցային համաձայնություններ. Մոնիտորինգի կանոններ և գնահատման մեթոդները» զեկույցը: Համագործակցության արդյունքում մշակվել է նոր նախագիծ ծրագրային առաջարկների հետագա խթանման և նոր ծագած խնդիրներին աջակցելու համար:

Հանձնաժողովը, Միացյալ ազգերի կազմակերպության առևտրի և զարգացման կոնֆերանսի (ՄԱԿԱԶԿ/UNCTAD) «Մրցակցության օրենքներ և քաղաքականություն» թեմայով փորձագետների միջկառավարական խմբի հանդիպման ժամանակ, համաձայնություն է ձեռք բերել 2010 թվականին մշակել զեկույց «Մրցակցության օրենսդրության և քաղաքականության կամավոր փորձագիտական գնահատում» խորագրով Հայաստանի Հանրապետության օրինակով: Զեկույցի մշակման համար Հանձնաժողովը իրականացրել և շարունակում է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ՝ ՄԱԿԱԶԿ-ի փորձագետների փաստահավաք առաքելության այցը Հայաստանի Հանրապետություն կազմակերպելու համար:

Հանձնաժողովը անցած տարվա հոկտեմբերին ստորագրել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի և Ռումինիայի մրցակցության խորհրդի միջև համագործակցության» փոխըմբռնման հուշագիր: Հուշագիրը ստորագրվել է տնտեսական մրցակցության բնագավառում համագործակցությունը խթանելու համար՝ նպատակ ունենալով ստեղծել բարենպաստ պայմաններ երկկողմ

հարաբերությունների զարգացման համար, հիմնվելով հավասարության և փոխադարձ շահերի սկզբունքների վրա:

Միաժամանակ, շարունակվել է համագործակցությունը արտերկրյա մրցակցության մարմինների հետ՝ վերապատրաստման, գործերի ուսումնասիրության ընթացքում փորձագետների ներգրավման, փորձի և տեղեկատվության փոխանակման նպատակով:

Հանձնաժողովն ակտիվորեն մասնակցել է նաև միջազգային համաժողովներին, սեմինարներին, ամրապնդել է այլ երկրների համանման կառույցների հետ համագործակցությունը՝ մրցակցության զարգացմանը խոչընդոտող արդի խնդիրների քննարկման և միջազգային չափորոշիչներին համապատասխան մոտեցումներ որդեգրելու նպատակով:

Գլուխ 4. Հանճնաժողովի 2009 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի բյուջեով, որպես Հանճնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 198105.1 հազար դրամ:
Հանճնաժողովի 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունը /ըստ տնտեսագիտական հոդվածների/ ներկայացվում է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4
(հազ. դրամ)

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	Տարեկան նախահաշիվ	Դրամարկղային ծախս
Ընդամենը ծախս	198105,1	198101,5
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	148368,6	148368,4
-Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում	6766,0	6766,0
-Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	21143,8	21143,7
-էներգետիկ ծառայություններ	2615,9	2615,9
-Կոմունալ ծառայություններ	196,2	196,2
-Կապի ծառայություններ	7966,8	7966,8
-Գործուղումներ և շրջագայություններ հանրապետության ներսում	-	-
- Գործուղումներ և շրջագայություններ հանրապետությունից դուրս	2241,6	2240,5
-Տեղակատվական ծառայություններ	330,0	330,0
-Ներկայացուցչական ծախսեր	450,0	450,0
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	208,8	208,8
-Սեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	2141,4	2139,2
-Գրասենյակային նյութեր և հագուստ	2686,0	2686,0
-Տրանսպորտային նյութեր / բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար/	2768,0	2768,0
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր / մաքրիչ նյութեր, հիգիենիկ նյութեր/	210,0	210,0
-Այլ հարկեր	12,0	12,0

Հավելված

Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գրանցամատյանում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների ցանկը

01.01.10թ. դրությամբ

հ/հ	Տնտեսվարող սուբյեկտի անվանումը	Ապրանքային շուկայի անվանումը	Մասնաբաժինը	Որոշում
1	«Լուսակերտի տոհմային թռչնաբուծական ֆաբրիկա» ՍՊԸ	Հավի ձու՝ կճեպով	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 42,49 %)	Թիվ 87-Ա, 3 սեպտեմբերի, 2008թ.
2	«Գրանդ Տոբակո» ՀՋ ՍՊԸ	Ծխախոտ ֆիլտրով	Շուկայի մեկ երրորդից ավելին՝ 50,8 %	Թիվ 106-Ա, 16 հուլիսի, 2004թ.
		Ծխախոտ առանց ֆիլտրի	Չի հանդիպում էական մրցակցության, 92,3%	
3	«Բորոդինո» ՍՊԸ	Արդյունաբերական վերամշակման նպատակով ձեռքբերվող լոլիկ	Գերիշխող դիրք ունեցող (որպես սպառող գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 45,8%)	Թիվ 151-Ա, 17 նոյեմբերի, 2004թ.
4	«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (որպես սպառող գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 41,5%)	
5	«Աշտարակ-կաթ» ՓԲԸ	Պաղպաղակ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի մեկ երրորդից ավելին՝ 39,3 %)	Թիվ 58-Ա, 19 հունիսի, 2009թ.
		Թթվասեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 59,16 %)	Թիվ 71-Ա, 9 հուլիսի, 2008 թ.
		Պաստերացված և ստերիլիզացված մանրէազերծված կաթ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 57,03 %)	Թիվ 81-Ա, 30 հուլիսի, 2008 թ.
6	«Երևանի շամպայն գինիների գործարան» ԲԲԸ	Շամպայն և փրփրուն գինիներ	Գերիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)	Թիվ 81-Ա, 26 օգոստոսի, 2005 թ.
7	«Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ	Կերակրի աղ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 84-Ա, 26 օգոստոսի, 2005 թ.
		Քարաղ (կերային)	Գերիշխող դիրք ունեցող	
		Աղացած աղ (տեխնիկական)	Գերիշխող դիրք ունեցող	
8	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ	Գազավորված (կարբոնացված), քաղցրացված ըմպելիքներ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 111-Ա, 14 սեպտեմբերի, 2005 թ.
9	«Երևանի գարեջուր» ՓԲԸ	Գարեջուր	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 113-Ա, 14 սեպտեմբերի, 2005 թ.
10	««Կոտայք» գարեջրի գործարան» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող	

11	«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ	Խմելու ջուր	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 59-Ա, 7 հունիսի, 2006 թ.
12	«Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
13	«Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
14	«Նոր-Ակունք» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
15	«Սևան» ՍՊԸ	Աղամաթուզ (բանան)	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 68-Ա, 12 հուլիսի, 2006թ.
16	«Քեթրին» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 68-Ա, 12 հուլիսի, 2006թ.
17	«Վալլետտա» ՍՊԸ	Թեյ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 69-Ա, 12 հուլիսի, 2006թ.
18	«Կաֆե դյու Բրազիլ» ՍՊԸ	Սուրճ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 35.2%)	Թիվ 115-Ա, 6 սեպտեմբերի, 2006 թ.
19	«Ադամանդ Կ» ՍՊԸ	Արդյունահանված հանքային ջուր	Գրիշխող դիրք ունեցող (չի հանդիպում որևէ էական մրցակցության)	Թիվ 141-Ա, 19 դեկտեմբերի, 2006 թ.
20	««Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ	Շշալցված աղբյուրի ջուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 44.8%)	Թիվ 142-Ա, 19 դեկտեմբերի, 2006 թ.
21	«ՄԳԱ Վոթքր» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42.8%)	
22	«Էլիտա» ՍՊԸ	Խմորիչ հացաթխման համար	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 50,41%)	Թիվ 42-Ա, 4 հուլիսի, 2007 թ.
23	«Վաս Գրուպ» ՍՊԸ	Բուսական յուղ / ձեթ/	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով միասին գրավում են շուկայի առնվազն 2/3-ը՝ բնեղեն արտահայտությամբ՝ 70.8 %)	Թիվ 91-Ա, 19 հոկտեմբերի, 2007 թ.
24	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ			
25	«Ֆ. Կարապետյան» ԱՁ			
	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	Շաքարավազ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 91.4%, չի հանդիպում որևէ էական մրցակցության)	Թիվ 125-Ա, 8 նոյեմբերի, 2006 թ.
		Սառեցրած ձկներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 46,55 %)	Թիվ 68-Ա, 9 հուլիսի, 2008 թ.
		Ցորենի ալյուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42,05 %)	Թիվ 78-Ա, 3 հոկտեմբերի, 2007 թ.

26	«Մանանա Գրեյն» ՍՊԸ	Ցորենի ալյուր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36,77 %)	
27	«Կարի Թով» ՍՊԸ	Բրինձ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով միասին գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը՝ 59,6 տոկոսը)	Թիվ 88-Ա, 3 սեպտեմբերի, 2008 թ.
28	«Մոկոնաթ» ՍՊԸ			
29	«Ա.Հովհաննիսյան» ՍՊԸ	Թառափազգիներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 38,77 %)	Թիվ 113-Ա, 12 նոյեմբերի, 2008 թ.
30	«Արթուր Տաթևիկ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 33,36 %)	
31	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ	Մանկական խյուսեր (պյուրեներ)	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 68,35 %)	Թիվ 114-Ա, 12 նոյեմբերի, 2008 թ.
		Կարագ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 47,85 %)	Թիվ 49-Ա, 13 մայիսի, 2009 թ.
		Էթիլային սպիրտ	Գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է շուկայի ավելի քան 1/3-ը ավելին 99,88 %)	Թիվ 77-Ա, 24 սեպտեմբերի, 2009 թ.
	«Սալեքս Գրուպ» ՍՊԸ	Մանկական հյութեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 60,6 %)	Թիվ 116-Ա, 12 նոյեմբերի, 2008 թ.
	«Ալեքս Գրիգ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36,6 %)	
32	«Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ	Մայրական կաթին փոխարինող կերեր	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 34,49 %)	Թիվ 115-Ա, 12 նոյեմբերի, 2008 թ.
33	«Սլավէքս» ՍՊԸ	Մանկական շիլաներ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 33,61 %)	Թիվ 117-Ա, 12 նոյեմբերի, 2008 թ.
	Ոչ պարենային ապրանքային շուկաներ			
1	«Հեռուստատեքստ» ՍՊԸ	Հեռուստատեքստ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 11-Ա, 16 մարտի, 2004թ.
2	«Դվին Հոլդինգ» ՓԲԸ	Ազոտական պարարտանյութեր (ամոնիումային սելիտրա)	(իրացման ծավալներով գրավում է շուկայի մեկ երրորդից ավելին՝ 81,2%)	Թիվ 47-Ա, 27 մայիսի, 2008թ.
3	«Ազոտինվեստ» ՓԲԸ			
4	«Մուլտի Լեոն» ՍՊԸ	Երևան քաղաքի սեղմած բնական գազ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի մեկ երրորդից ավելին՝ 57,7 %)	Թիվ 118-Ա, 18 օգոստոսի, 2004թ

5	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ	Նատրիումի հիպոքլորիդ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 143-Ա, 6 հոկտեմբերի, 2004թ.
6	«Հայաերոնավիգացիա» ՓԲԸ	Օդային երթևեկության սպասարկում (աերոնավիգացիա)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 146-Ա, 27 հոկտեմբերի, 2004թ.
7	««Նորք» տեղեկատվա-վերլուծական կենտրոն» ՓԲԸ	Հաշմանդամներին մատուցվող ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշմանդամների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 55-Ա, 1 հունիսի, 2005 թ.
		Սոցիալական աջակցության ծառայությունների ծրագրի շրջանակներում ընտանեկան նպաստի տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում		
		Զբաղվածության ծառայությունների ծրագրի շրջանակներում իրականացվող գործազուրկների տվյալների բազայի շահագործման և սպասարկման ծառայությունների՝ «Գործ» համակարգի ձեռքբերում		
8	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ	Բաշխիչ ցանցերով էլեկտրական էներգիայի մատակարարում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից), իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի 100 %	Թիվ 73-Ա, 27 հուլիսի, 2005 թ.
9	«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ	Բնական գազ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 85-Ա, 26 օգոստոսի, 2005 թ.
10	«Մոնա Գրուպ» ՍՊԸ	Տնտեսական օճառ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի 1/3-ից ավելին, 46.32 %)	Թիվ 28-Ա, 23 ապրիլի, 2008թ.
11	«Արարատցեմենտ» ՓԲԸ	Ցեմենտ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 124-Ա, 19 հոկտեմբերի, 2005 թ.
12	«Միկա-ցեմենտ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող	
13	«Օրիֆլեյմ Քոսմեթիքս» ՍՊԸ	Լոգանքի միջոցներ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 125-Ա, 19 հոկտեմբերի, 2005 թ.
14	«Ֆայբրնետ Քոմյունիքեյշն» ՍՊԸ	Տվյալների հաղորդման միջազգային տարանցման ծառայություն՝ինտերնետ հասանելիության համար	Գերիշխող դիրք ունեցող (ձեռքբերման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի ավելի քան 1/3-ը՝46,1 %)	Թիվ 81-Ա, 24 սեպտեմբերի, 2009 թ.
15	«ԱրմենՏել» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող (ձեռքբերման ծավալներով գրավում է ապրանքային շուկայի ավելի քան 1/3-ը՝ 53,9 %)	

15	«ԱրմենՏել» ՓԲԸ	Միջազգային վարձակալված շղթաների ծառայություն ինտերնետ հասանելիության համար	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 129-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական տեղական հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջքաղաքային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար հիմնական միջազգային հեռախոսային ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Հանրային համակցված հեռախոսացանցի համար վարձակալած գծի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Ծառայություն մատուցողի կողմից տեղադրված կամ սպասարկվող հեռախոսային ցանցի հիմնական ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Հանրային շարժական փեյջինգ ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Ոչ հիմնական ներպետական կամ միջազգային հեռախոսային ծառայություններ (ֆրի ֆոն)	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		«Հավաքիր համարը» կամ հավելավճարով ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 130-Ա, 9 նոյեմբերի, 2005 թ.
		Տվյալների փոխանցման համար վարձակալած գծերի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 41-Ա, 12 ապրիլի, 2006թ.
		Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 75-Ա, 12 օգոստոսի, 2005 թ.
16	«Ռ-Տելեկոմ» ՓԲԸ	Շարժական կապի գլոբալ համակարգի (GSM) ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 29-Ա, 10 մարտի, 2006թ.
17	«Գաջեգործ» ՓԲԸ	Գաջ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 137-Ա, 2 դեկտեմբերի, 2005 թ.
18	«Գաջ» ՓԲԸ		Գերիշխող դիրք ունեցող	
19	«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ	Ուղևորափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 141-Ա, 2 դեկտեմբերի, 2005թ.

		Բեռնափոխադրող օդանավերի թռիչք-վայրէջքի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Ուղևորներին սպասարկող օդանավակայանում յուրաքանչյուր մեկնող ուղևորի սպասարկում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Տելեսկոպիկ կամրջի օգտագործում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Բազավորվող և չբազավորվող ավիաընկերության ուղևորատար օդանավերի կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Ուղևորափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Բեռնափոխադրող օդանավերի վերգետնյա սպասարկման հիմնական ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Բեռնամշակման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Ավիավառելիքի լիցքավորման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Ավտոմեքենաների կայանում	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Օդանավակայանում օդանավին ավտոմեքենայով մոտենալու և թանկարժեք բեռներն անմիջապես օդանավից ընդունելու և առաքելու ծառայություն	Մենաշնորհ դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 38-Ա, 4 հուլիսի, 2007 թ.
		Օդանավակայանում բեռնային համալիրի միջոցով բեռների սպասարկում	Մենաշնորհ դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 38-Ա, 4 հուլիսի, 2007 թ.
20	«Տիգրան» ՍՊԸ	Երևան-Նոր Խարբերդ և հակառակ ուղղությամբ ուղևորափոխադրումներ	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 2-Ա, 1 փետրվարի, 2006թ.
21	«Բագրատուր» ՍՊԸ	«Երևան-Անթալիա(Թուրքիա)-Երևան» ուղղությամբ ավիատոմսերի իրացում	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 3-Ա, 1 փետրվարի, 2006թ.
22	«Բարսել» ՍՊԸ	Բիտում	Գերիշխող դիրք ունեցող	Թիվ 60-Ա, 7 հունիսի, 2006 թ.
23	«Հայփոստ» ՓԲԸ	Ներպետական նամակագրական թղթակցության ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 61-Ա, 7 հունիսի, 2006 թ.
		Հեռագրային կապի ծառայություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
		Փոստային կապի և սուրհանդակային ճեպընթաց կապի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող	
		«Հեռուստածրագրերի տարածում»	Գերիշխող դիրք ունեցող /որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 71,4 տոկոսը/	Թիվ 59-Ա, 19 հունիսի, 2009թ.
		«Ամսագրերի, հանդեսների տարածում»	Գերիշխող դիրք ունեցող /որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 78,5 տոկոսը/	Թիվ 59-Ա, 19 հունիսի, 2009թ.
	«Վալլետտա» ՍՊԸ	«Անհատական միակոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ը՝ 93.37%	Թիվ 110-Ա, 12 դեկտեմբերի, 2007 թ.

24	«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ	Երկաթուղային բեռնափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ը՝ 100 %)	Թիվ 07-Ա, 6 մարտի, 2009 թ.
		Երկաթուղային ուղևորափոխադրումների ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ը՝ 100%)	
		Երկաթուղային տրանսպորտի ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ը՝ 100%)	
25	«Սոֆ-Սուս» ՍՊԸ	«Կենցաղում օգտագործվող շիկացման լամպեր»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 56,0%)	Թիվ 70-Ա, 7 օգոստոսի, 2009 թ.
26	«Ֆլեշ» ՍՊԸ	Բենզին	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի ավելի քան 1/3-դը՝ 42,24%)	Թիվ 95-Ա, 28 դեկտեմբերի, 2009 թ.
		Դիզելային վառելիք	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի ավելի քան 1/3-դը՝ 51,4%)	Թիվ 96-Ա, 28 դեկտեմբերի, 2009 թ.
27	«Նյու-Շահաբ» ՍՊԸ	Քիմիական մաքրման ծառայություններ	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 40.36%)	Թիվ 129-Ա, 8 նոյեմբերի, 2006 թ.
28	«Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ	Դեղերի և դեղանյութերի պետական գրանցման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	Թիվ 140-Ա, 19 դեկտեմբերի, 2006 թ.
		Դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման հավաստագրման համար փորձաքննություն	Գերիշխող դիրք ունեցող (չունի մրցակից)	
29	«Գապէքս» ՍՊԸ	«Քաղաքացիական և բնակարանային շինարարությունում օգտագործվող ապակի»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36.54 %)	Թիվ 58 -Ա, 1 օգոստոսի 2007 թ.
30	«Իմեքս Գրուպ» ՍՊԸ,	«Անհատական երկկոնտուրանի գազային ջեռուցման կաթսաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 50.29%	Թիվ 110-Ա, 12 դեկտեմբերի, 2007 թ.
31	«Բարսիս» ՍՊԸ			
32	«Արմենիա Լադա» ՀՁ/ՓԲԸ	«Ռուսական արտադրության նոր մարդատար ավտոմեքենաներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 1/3-ը՝ 99.23%	Թիվ 111-Ա, 12 դեկտեմբերի, 2007 թ.
33	«Կարկոմավտո» ՍՊԸ			
34	«Արայ» ՍՊԸ	«Հեռուստացույցներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 52,9%)	Թիվ 27-Ա, 23 ապրիլի, 2008 թ.
35	«Փրիթի Ռեյ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 52,9%)	
36	«Միկմետալ» ՓԲԸ	Ամրան	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 50,47%)	Թիվ 41-Ա, 4 հուլիսի, 2007 թ.

37	«Յունիմետխիմ» ՍՊԸ		Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով երկուսը միասին գրավում են տվյալ շուկայի 50,47%)	
38	«Ամիկուս» ՍՊԸ	«Արյան պատրաստուկներ, պլազմայի փոխարինիչներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով միասին գրավում են շուկայի 63,46 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
39	«Լիկվոր» ՓԲԸ			
40	«Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ	«Հորմոններ, այլ ներզատային դեղեր, հակաբեղմնավորիչներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 36,25 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
41	«Նատալի ֆարմ» ՍՊԸ	«Իմունաբանական դեղեր»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42,34 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
42	«Վագա Ֆարմ» ՍՊԸ	«Մկանային ապալարիչներ (ծայրանդամային ազդեցության), խոլինսթերազի արգելակիչներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 39,53 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
43	«Ռիխտեր-լամբրոն» ՀՁ ՍՊԸ	«Արգանդակծկիչներ և արգանդաթուլացնողներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 43,47 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
44	«Ֆարմատեք» ՍՊԸ	«Ջրաաղային, թթվահիմնային հավասարակշռությունը կարգավորող լուծույթներ»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 49,29 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
		«Մաշկային հիվանդությունների դեպքում կիրառվող դեղեր (տեղային)»	Գերիշխող դիրք ունեցող (իրացման ծավալներով գրավում է շուկայի 1/3-ից ավելին՝ 42,52 %)	Թիվ 1-Ա, 4 փետրվարի, 2009 թ.
45	Հայաստանի կույրերի միավորման «Հրատարակչություն» ՍՊԸ	«Հաշմանդամների համար հատուկ տարատեսակներով (բրայլյան) գրքերի, ամսագրերի տպագրության, տետրերի պատրաստման և «Խոսող» գրքերի ձայնագրության ծառայություններ»	Մենաշնորհի դիրք ունեցող (որպես իրացնող չունի մրցակից)	Թիվ 31-Ա, 23 մարտի, 2009 թ.
46	«Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ	«Համակարգչային գլոբալ ցանցի «.am» տիրույթում հանգուցային անվանումների գրանցման, սպասարկման, համակարգման և կառավարման ծառայություններ»	Մենաշնորհի դիրք ունեցող	Թիվ 50-Ա, 13 մայիսի, 2009 թ.
47	«Պրեսս Ստենդ» ՍՊԸ	«Լրատվական թերթերի տարածում»	Գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 55,4 տոկոսը)	Թիվ 59-Ա, 19 հունիսի, 2009թ.
		«Լրատվական թերթերի մանրածախ իրացում»	Գերիշխող դիրք ունեցող (որպես իրացնող իրացման ծավալներով գրավում է տվյալ շուկայի ավելի քան մեկ երրորդը՝ 37 տոկոսը)	Թիվ 80-Ա, 24 սեպտեմբերի, 2009թ.

ընշված տնտեսվարող սուբյեկտները գործում են նաև այլ ապրանքային շուկայում